BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE VENISE-S. LAZARE

№ 274 ՈՒՐԲԱԹ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 274

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՅ 1916 Թ. ՀԱՄԱՐ
(45-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը 10 ռուբ.	10 ամիսը 9 ռուբ.	9 ամիսը 8 ռուբ.	8 ամիսը 7 ռուբ.	7 և 6 ամիսը 6 ռուբ.	Այնուհետեւ ամսական ՄԷԿ ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 12 ռուբլի։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՍՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Յայտնվում է ի գիտութիւն ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ բաժանորդների, որ 1916 թ. բաժանորդավճարը դարձված է 12 ՌՈՒԲԼԻ։

Միաժամանակ խնդրվում է „Մշակի" բաժանորդներին վաղօրօք բաժանորդագրվել առաջիկայ տարվայ համար, որպէսզի կարելի լինի յունվարի 1-ից թերթը կանոնաւոր ուղարկել բաժանորդագրվածներին։

„ԱՂԲԻՒՐԻ" ներկայ դեկտեմբերի №-ը ամբողջովին նուիրվում է ՍԵԴՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻՆ և լոյս կը տեսնի դեկտեմբերի 20-ին։
„ՏԱՐԱԶԻ" դեկտեմբերի №-ում տպագրվում են մի շարք պատկերներ Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ ՇՈՒՐՋ։ Այս երկու № №-ի գինը 2 ր.։
„Աղբիւրի" եւ "Տարազի" 1916 թ. բաժանորդների համար (մինչև դեկտ. 20-ը ստորագրվողների) ՄԷԿ ՌՈՒԲԼԻ։
ԲԱՑՎԱԾ Է „ԱՂԲԻՒՐԻ" եւ „ՏԱՐԱԶԻ" 1916 թ. բաժանորդագրութիւնը։ Հրաւիրվում են այդ թերթերի բարեկամները՝ տարածելու «ԱՂԲԻՒՐՆ» ու «ՏԱՐԱԶԸ» հայութեան բոլոր խաւերում։ Բաժանորդագինը տարին 10 ռուբլի (արտասահման 50 ֆր. կամ 40 շիլլինգ)։
Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ
(ա. օ.) առ. 13. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՉԻԹԵՆԻ
ԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՅՕԳՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ
Ժողովածուին մասնակցել են մօտ 50 հայ գրականագէտներ։
Գինն է 2 ռուբլի Թիֆլիսում։ Օտար տեղերի համար ճանապարհածախսով—2 ր. 50 կ.։
Վերադիր վճարով ոչ ոքի չի ուղարկվում։
Պահեստը գտնվում է Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակում, ուր և պէտք է դիմել այս հասցէով՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія на случай бѣдствій «НПАСТАМАТУЙЦЪ». Соломоновская, 21. առ. 892. 10—6

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բերլինի համալսարանի պրոֆ. Պօզնէրի։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6։ Սոլոլակ, Ռուիշչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
առ. (չ. ու. կ.) 806. 50—15

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕՏՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—92.
առ. (ա. օ.) 896. 100—5

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7-ը։
Бебутовская ул. № 26. 3 րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
առ. 779. 50—36

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐՋՈՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիէեվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67։
առ. 753. 50—42

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պերէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—90

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Յօգուտ «Մշակի» ֆոնդի հետեւեալ գրքերը.

1) «ՄՇԱԿԸ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ր.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԻԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՅԷՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ալ. Առաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ր.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ր.

Վերյիշեալ հրատարակութիւններից միմի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։ 2. 0—5

ՉԻՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ

Դժնդակ պատերազմը այնքան է լարել աշխարհի ուշադրութիւնն իր վրա, որ նոյնիսկ համաշխարհային դէպքերը, որոնք առաջ, խաղաղութեան ժամանակ, ցնցում առաջ կը բերէին, անցնում են գրեթէ առանց ուշադրութիւն գրաւելու։

Ինչպէս գիտենք, աշխարհիս ամենամեծ, ամենաընդարձակ և ամենաբազմամարդ երկրներից մինը՝ Չինաստանը հազարաւոր տարիներից ի վեր կազմում էր մի միահեծան ինքնակալութիւն, անսահման, բացարձակ, աւտօկրատ ռէժիմով, աւելի շուտ՝ բռնապետական՝ ռէժիմով։ Չորս հարիւր միլիոնից աւելի մի ժողովուրդ ճանաչում էր Երկնքի Զաւակի կամ Բօգդիխանի միապետական իշխանութիւնը։ Բայց 1911—12 թ. այդ միապետական երկրում ծագեց յեղափոխութիւն, և բռնապետական ռէժիմով կառավարվող պետութիւնը դարձաւ հանրապետական ու գահընկեց եղած ինքնակալի փոխարէն զօրավար Իւանշիկայը դարձաւ հանրապետութեան նախագահ։

Սակայն, ինչպէս երեւում է, հանրապետական և սահմանադրական սկզբունքները չինական ժողովրդի համար խորթ էին և տարօրինակ, որովհետև վերջերս նա իր ներկայացուցիչների միջոցով ցանկութիւն յայտնեց, որ վերականգնվի ինքնակալութիւնը, և կայսրի կամ ինքնակալի թագը առաջարկեց հանրապետութեան նախագահ Իւանշիկային։

Ի հարկէ, ոչ մի տարակոյս չը կայ, որ այդ ամենը սարքված, կազմակերպված է իրա՝ Իւանշիկայի կողմից—իր վարձկան գործակալների ձեռքով, որովհետեւ դժուար թէ ժողովրդին հնարաւորութիւն տրված լինի ազատօրէն արտայայտել իր կարծիքը. բայց այն հանգամանքը, որ պետական մի այդպիսի յեղաշրջումն կամ պետական հարուած (coup d'éat) կատարվում է առանց որեւէ ցնցման, խռովութեան, բողոքի, պարզ ցոյց է տալիս որ չինական ժողովուրդը միանգամայն անտարբեր է դէպի կառավարչական ձեւը, որովհետեւ նա մնաց միեւնոյն թշուառ վիճակի մէջ հանրապետութեան ժամանակ, ինչպէս գտնվում էր կայսրութեան ժամանակ։ Եւ, իսկապէս, Իւանշիկայը միայն անունով ընտրեալ նախագահ էր, այլ նա դիկտատոր էր, որ գործադրում էր ինքնակալի իրաւունքներ՝ հանրապետական նախագահի դիմակի ներքոյ։

Ինչպէս ասացինք, չինական յեղափոխութիւնը ծագեց 1911 թ.։ Այդ երկրի հարաւային մասը, Եանձէ գետի հովիտը, ապստամբվեց, և այդ ապստամբութիւնը պատճառ եղաւ մանջուրական դինաստիայի անկման, որովհետեւ արքայական տունը, որ իր ամբողջ յոյսը դրել էր զօրքերի գերագոյն հրամանատար Իւանշիկայի վրա, իրան տեսաւ լքված վերջինի կողմից, այն մարդու կողմից, որին կայսրը կոչել էր՝ կռւելու համար յեղափոխականների դէմ։ Երբ Իւանշիկայը յայտնեց, որ միակ միջոցն այն է, որ կայսրը հրաժարական տայ, վերջինս հասկացաւ դաւաճանութիւնը և այլ ևս ոչ մի յոյս չունենալով, քանի որ զօրքը իր ձեռքում չէր, անմռունչ հպատակվեց ու հրաժարվեց գահից։ Այդ հրաժարումից յետոյ հաստատվեց ժամանակաւոր կառավարութիւն, որ՝ հրատարակելով հանրապետութիւն՝ նախագահութեան պաշտօնին կոչեց նրան, որ փրկել էր երկիրը ռէակցիայի և յեղափոխութեան սարսափներից։ Նա զսպել էր յեղափոխականներին և միևնոյն ժամանակ ստիպել էր ռէակցիայի ներկայացուցիչ կայսրին հրաժարվել գահից։ Իւանշիկայը, իբրև նախագահ, կառավարեց երկիրը մինչև չինական առաջին պարլամենտի գումարումը, և այդ ժամանակամիջոցը գործադրեց ամրացնելու իր դիրքը և իր իշխանութիւնը զօրքի վրա, այնպէս որ երբ պարլամենտը գումարվեց, նա արդէն դիկտատոր էր, և պարլամենտը անզօր հանդիսացաւ որեւէ քայլ անել Իւանշիկայի դէմ, որ կռթնած էր զինւորական ուժի վրա, և ստիպվեց ճանաչել նրա դիկտատորութիւնը։ Այդ մտքի հետ հաշտվել չէին կարող հարաւային յեղափոխականները, որոնք նորից ապստամբվեցին, բայց Իւանշիկայը իր զօրքի ձեռքով և չափաւոր տարրերի աջակցութեամբ կարողացաւ շատ շուտով զսպել նրանց, մաքրելով պարլամենտը արմատական և դեմոկրատական տարրերից, սոսկալի խըստութիւններ և անգթութիւններ գործ դնելով իր հակառակորդների վերաբերմամբ։

Եւ զսպելով 1913 թ. յեղափոխութիւնը, Իւանշիկայը սկսեց կառավարել երկիրը իբրև միապետ, թէև հանրապետական նախագահի անունով, և կամաց-կամաց պատրաստել հողը՝ ինքնակալական ռէժիմը վերականգնելու համար։ Ներկայ րոպէին, երբ բոլոր պետութիւնները զբաղված են համաշխարհային պատերազմով, նա շատ յարմար գտաւ իր ծրագիրն իրագործելու։ Եւ ահա չինական պետական խորհուրդը, որ բաղկացած է ամբողջովին Իւանշիկայի արբանեակներից, ներկայացրեց նախագահին հանրագիր, թէ ժողովուրդը ցանկանում է վերականգնել կայսրութիւնը, և ընտրողները որոշեցին առաջարկել կայսերական թագը իրան՝ Իւանշիկային, ուստի և պետական խորհուրդը աղերսում է անսալ ժողովրդի ձայնին։

Խորամանկ և ճարպիկ Իւանշիկայը սկզբում մերժեց, առարկելով թէ ինքն երդվել է հաւատարիմ մնալ հանրապետութեան, սակայն երբ պետական խորհուրդը յայտարարեց, որ ինքն արձակում է նրան իր տուած երդումից, Իւանշիկայը յօժարութիւն յայտնեց ընդունել կայսերական թագը։

Եւ առաջուց պատրաստված ճարպիկ կոմեդիան խաղացվեց շատ ճարպիկ և հմուտ կերպով։ Եւ Հեռաւոր Արեւելքում հիմնվում է այժմ մի նոր կայսերական հարստութիւն, որի հիմնադիրն է նախկին զօրավար Իւանշիկայը։

Անտարակոյս, մեծ պետութիւնները ստիպված կը լինեն ճանաչել պետական այդ յեղաշրջումը, համարելով այն Չինաստանի ներքին գործ։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան զօրաճակատի վրա լոյս դեկտեմբերի 7-ի գիշերը մեր հետախոյզները Արա գետի և Պուտինցէվ լերան միջև, Օլթիից 30 վերստ դէպի հարաւ-արեւմուտք կռւի բռնվեցին, կտրուկ յարձակումով քշեցին թիւրքերին խրամատներից և առաջացան։ Մօտ բերելով պահեստի զօրամասերին, թիւրքերը 4 հակայարձակում գործեցին։ Բոլոր հակայարձակումները վանվեցին թիւրքերի համար մեծ կորուստներով, ըստ որում արտիլլերիան յաջող կերպով աջակցեց իր կրակով։

Ատրպատական. Վանի շրջանում մեր զօրամասերից մինը վանեց թշնամու մի զօրախմբի, թւով մօտ 150 մարդու և գրաւեց Բինօր կիրճը, որ գտնվում է Ուրմիա քաղաքից 40 վերստ հեռաւորութեան վրա։

Պարսկաստանում մեր զօրքերը գրաւել են Նօվերանը և Կումը։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 դեկտեմբերի

ԲՈՒԽԱՐԵՍՏ. — Սօֆիայից հաղորդում են, որ Սոլունի և Բօլգարիայի միջև հաղորդակցութիւնը դեկտ. 7-ից խզվել է, որովհետև սկսած Սոլունի մօտից մինչև Օկչիլար ամբողջ երկաթուղագիծը գրաւել են անգլիացի և ֆրանսիացի զօրքերը։

ՍՈԼՈՒՆ. — Դրութիւնն անփոփոխ է։ Լռութիւնը բացատրվում է նախ՝ նրանով, որ աւստրո-գերմանացիք ունեն աննշան ուժեր, երկրորդ՝ նրանով, որ յունաց կառավարութիւնը բողոքել է բօլգարների դէմ, որոնք խախտում են սահմանը։

Դաշնակիցները Սոլունը դարձնում են առաջնակարգ բերդ։ Ամեն օր գալիս են զօրքեր խոշոր շոգենաւերով։ Զօրքերը իրանց հետ բերում են վրաններ, ռազմամթերք, թնդանօթներ, աւտոմօբիլներ։ հեծանիւներ, ձիեր, ջորիներ և կենսական պիտոյքներ։

Ֆրանսիացի հետախոյզները պարզել են, որ թշնամու զօրքերը բաւականին առաջացել են։ Ըստ երեւոյթին բօլգարները ձեռնարկում են ընդարձակ ռազմի պատրաստութիւնների և ամրանում են դիրքերում։

ԼՈՆԴՈՆ. — Համայնքների պալատում Ասկվիտը յայտնեց, որ անգլիական կորուստները Սուվլից նահանջելու ժամանակ կազմում են 3 վիրաւոր։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Մեր երկու փոքր ականանաւ դեկտեմբ. 7-ին, լողալով բօլգարական ափերի մօտ, հանդիպեցին բօլգարական մի ականանաւի և հետապնդեցին, ռմբակոծելով նրան։ Բօլգարական ականանաւը փախաւ Վառնա, իսկ մեր ռազմանաւերը հալածեցին նրան մինչև նաւահանգիստը, ուր մարտկոցները սկսեցին կրակել մեր ականանաւերի վրա։ Մեր ականանաւերը դուրս եկան մարտկոցների կրակի շրջանից, չը կրելով ոչ կորուստ, ոչ էլ վնասուածք։

Մեր ռազմանաւերը միևնոյն շրջանում ջրասուզեցին 2 թիւրքական առագաստանաւ, որոնք գնում էին Կոնստանցա բենզին վերցնելու։ Նաւաստիները գերվել են։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 դեկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգայի շրջանում մեր արտիլերիան աջողութեամբ ռմբակոծեց գերմանական աէրօպլաններին։

Շլօկի և Դալէնա կղզու մօտ մեր թնդանօթաձգութիւնը գերազանցեց թշնամու կրակից։

Եակօբշտադտի և Դվինսկի շրջաններում մեր թնդանօթային կրակը ցրեց Արբիգեանի, Կոնէպօլի, Իլլուկստի և Տենաէնֆէլդի մօտ աշխատող գերմանացի բանւորներին։

Վիդզիից դէպի հարաւ մեզ համար նպաստաւոր հետախուզական գործողութիւններ են։

Մեր օդագնացները նորից ռումբեր նետեցին հակառակորդի սայլատար վաշտերի վրա Սվենցիանի շրջանում։

Գալիցիայում, Տրէմբօլիից դէպի արեւմուտք, Տիւշկօվա գիւղի շրջանում հակառակորդը գրաւեց մի բլուր մեր զօրաճակատի առաջ։ Մեր զօրամասերից մէկը, առաջանալով, ցրեց հակառակորդին և գերեց մօտ 50 հոգի։ Նահանջելիս հակառակորդը հանդիպեց մեր մի ուրիշ զօրախմբի, որ գերեց կրկին մօտ 40 մարդ, նաև ձեռք ձգեց շատ զէնք ու փամփուշտ։

Բուչաչից դէպի հարաւ, Իմելէվի շրջանում վանվեց թշնամին, որ փորձում էր սպիտակ վերնազգեստներով մօտենալ մեր խրամատներին։

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւն.

Գիշերը ոչինչ էական բան տեղի չունեցաւ։ Վօգէզներում երէկվայ մեր յարձակումը հնարաւորութիւն տուեց մեզ բաւականին ընդլայնել մեր դիրքերի շրջանը։ Հարտմանս-Վէյլէրկօֆի արեւելեան լանջերի վրա մինչև այժմ մենք գերել ենք 1200 գերմանացի, որոնց թւում 21 օֆիցեր։

ԼՈՆԴՈՆ. — Բրիտանական գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Թշնամին երէկ երկու վճռական յարձակման դիմեց մեր ձեռք ձգած փոսին տիրելու նպատակով, բայց յարձակումները վանվեցին յամառ կռւից յետոյ։ Թշնամին կրեց խոշոր կորուստներ։

ՀՌՈՄ. — Գլխաւոր բանակից յայտնում են.

Պլէցցօ աւազանում թշնամին, օգտվելով մթութիւնից, գրաւեց մեր դիրքերից մինը Կօրնիանիցայի հեղեղատի ուղղութեամբ, յետոյ պաշտպանեց այն ականների օգնութեամբ։

ԼՈՆԴՈՆ. — Լլօյդի գործակալութիւնը յայտնում է, որ անգլիական «Խէնալի» շոգենաւը (նախկին գերմանական «Օֆելիա») ջրասուզվել է. նաւաստիներն ազատվել են։

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
8 դեկտեմբերի

ԹԵՀՐԱՆ.—Այսօր մեր զօրքերը գրաւեցին Կումը։

Քաղաքում խօսում են, որ Կումի առաջ տեղի է ունեցել մեծ ճակատամարտ, որ նորից վերջացել է հակառակորդի լիակատար պարտութեամբ։

Այդ շրջանում կենտրոնացած էին Պարսկաստանում անհամեմատ յայտնի ցեղերի պետերի ույժերը, որոնք միշտ զբաղվում են աւազակութիւններով և որոնցից վերջերս օգտվում էին մեր թշնամիները։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
9 դեկտեմբերի

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.— Բեռլինի լրագիրների տւեալների համաձայն, վերջին օրերը Բեռլինում ուտեստեղէնի և մանաւանդ կաթի պակասութեան պատճառով, նաև տնտեսական ճնշումների հողի վրա տեղի են ունենում լուրջ անկարգութիւններ։ Այդ անկարգութիւնների մասին յօդուածներ պարունակող թերթերի համարները գրավել են։

Գերմանական ռայխստագը վերջնականապէս ընդունել է 10 միլիարդ մարկի օրինագիծը։ Հակառակ է եղել սօցիալ-դեմօկրատների փոքրամասնութիւնը, պատճառաբանելով թէ պատերազմը աղքատացնելու է Եւրոպան և ոչնչացնելու է եւրոպական կուլտուրան։

«Փորվէրտս»ի ասելով, ռայխստագի սօցիալ-դեմօկրատների ֆրակցիայի նախագահ Հաազէն հրաժարվել է իր պաշտօնից։

Էլզաս-Լօթարինգիայի շատ քաղաքներում դպրոցներից արտաքսված է ֆրանսերէն լեզուն։

Մի քանի օր գնացքները Լվով են բերում մեծ թւով վիրաւոր աւստրիացի զինւորներ։

Նոյեմբերի սկզբին 6000 լեհ բանւոր մեկնել են Վարշավայից Գերմանիա աշխատանքի։

Բեռլինից հաղորդում են, որ ռայխստագի նիստերը յետաձգված են մինչև դեկտ. 29-ը։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Սօցիալիստական կուսակցութեան 11 անդամ յանձնվել են պատերազմական դատարանի, մեղադրվելով այն բանում, որ նրանք հանդիսանում են հեղինակներ այն անօրեն կոչի, որ տարածվեց վերջերս բանւորների և գիւղացիների մէջ Սօֆիայի շրջանում և որով յորդորվում էր հաշտութիւն պահանջել՝ առ ի դադարումն նաւաճողական խելառ քաղաքականութեան։

ՓԱՐԻԶ.—Փելդմարշալ Ֆրենչը երեկ մեկնեց Լոնդոն։

«Յաղթութեան փոխառութեան» ստորագրութիւնը, ինչպէս ենթադրվում է բանկային շրջաններում, ընդհանուր առմամբ կը տայ 14 միլիարդ ֆրանկ։

ԼՈՆԴՈՆ.—«Դէյլի Սկէտի» մէջ տպված է պարլամենտի բանւորական կուսակցութեան անդամ Օգրէդիի յօդուածը, որ ասում է, թէ վերջին շաբաթում զինւոր են գրվել 1,539.000 հոգի, իսկ ամբողջ 9 ամիսների ընթացքում՝ մօտ $2^1/_2$ միլիոն մարդ։

Համայնքների պալատը միաձայն ընդունեց մի միլիօն լրացուցիչ նորակոչների օրինագիծը, որի առիթով Ասկվիտն ասաց. «Այժմ մենք ունենք դաշտային զօրք թւով 1.250,000 մարդ. բայց անհրաժեշտ է, որպէսզի ամեն ոք, ով ազատ է, մտնի զօրքի մէջ»։

Այնուհետև Ասկվիտն ասաց. «Երկու շաբաթ առաջ Պարիզում կայացաւ կարևոր զինւորական կօնֆերենցիա, որ տևեց 3 օր, ուր ներկայ էին ֆրանսիական, ռուսական, իտալական և բրիտանական շտաբների ներկայացուցիչները։ Այդ վստահելի խորհրդակցութեան մէջ բազմակողմանի կերպով քննվեցին մօտիկ ապագայի կարևորագոյն ռազմագիտական պրօբլէմները և լիակատար համերաշխութեամբ շատ կարևոր վճիռներ կայացան։ Դաշնակիցները յոյս ունեն, որ նոր սիստեմ ընդունելը միանգամայն համերաշխութիւն կը մցնէ գործողութիւնների մէջ և կը համաձայնեցնէ պլանները։ Ոչ մինը դաշնակիցներից չէ մոռանում անջատ հաշտութեան մասին, ամեն մէկը լարում է իր ույժերը, որպէսզի վերջնական նպատակը՝ յաղթութիւնը ձեռք բերվի»։

Ապա մինիստրն ասաց. «Ես համաձայն եմ Լլօյդ Ջօրջի հետ, որ պատերազմի այս կամ այն բոպէին և երկրորդական նշանակութեան մի քանի իրողութիւններ կարող են մեզ ներհակ լինել, բայց գլխաւոր փաստերը, որոնց պէտք է հաշւի առնել, շարունակում են զարգանալ մեր օգտին։ Այս պատերազմի ընթացքում կատարվել են շատ սխալներ և արվել են վատ հաշիւներ, բայց ոչ միմիայն մեր կողմից»։

Վերջում Ասկվիտը յարակցեց. «Իսկ ինչ վերաբերում է մեզ—իսկ ինձ յայտնի է, որ միևնոյնը կարելի է ասել և մեր դաշնակիցների մասին—մեր կամքը ոչ մի րոպէ չէ երերվել, և մեր զօրքերի ու ռազմամթերքի քանակութիւնը ամեն ամիս աւելանում է և աւելի լաւ է կազմակերպվում պատերազմի նպատակների համար»։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Գերմանական ականաւորները բռնել են «Արգօ» շոգենաւը շվէդական ջրերում։ Այդ բանը մեծ յուզմունք է առաջ բերել հասարակական կարծիքի մէջ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Սօլունից հեռագրում են, որ անգլիական օդագնացները Կ. Պօլսում պայթեցրել են Կրուպպի գործարանը։

◆ Հինդենբուրգը ասել է, որ կը վերսկսի գործողութիւնները, համոզվելով միայն, որ աջողութիւնը կարդարացնէ զոհերը։

◆ Բուլղարները գտնվում են Էլբասանից 40 կիլօմետր հեռաւորութեան վրա, իսկ աւստրիացիք շարժվում են դէպի Սկուտարի և Ջիօվանի-դը-Մեդուա։

◆ Յոյն-բուլղարական ընդհարման ժամանակ վիրաւորվել են մօտ 20 յոյն։

◆ Ամերիկայի և Աւստրիայի յարաբերութիւնները՝ «Անկօնան» ընկղմելու առիթով՝ ստանում են շատ սուր բնոյթ։

◆ Դվինսկի վրա գերմանական աէրօպլանից նետել են 4 ռումբ։

◆ «Б. В.»-ն հնարաւոր չէ համարում այն լուրերը, թէ գերմանացիք խոշոր ույժեր են փոխադրելու դէպի ռուսական զօրաճակատը Բալկաններից, և ասում է, թէ դժուար թէ գեներալ Մակենզենի զօրքը գայ դէպի ռուսական զօրաճակատը։

◆ «Н. В.»-ն ստոյգ աղբիւրից յայտնում է, որ գեներալ-ադիւտանտ Ռուզսկին մի քանի ժամանակ առաջ հիւանդ էր թոքերի բորբոքումով։ Հէնց որ լաւացաւ, նա գնաց զօրաճակատ և նորից հիւանդացաւ։ Գեներալը այժմ լաւացել է, բայց նրա ույժերը այն աստիճան թուլացել են, որ բժիշկները կտրականապէս նրանից պահանջում են հանգստանալ։ Գեներալ Ռուզսկին մեկնում է Կովկաս ոչ պակաս 6 շաբաթով, որից յետոյ նորից կը մասնակցէ պատերազմական գործողութիւններին։

◆ «В. В.»-ն գրում է, թէ, ստոյգ աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համաձայն, խուժանը Կ. Պօլսում բացարձակ բողոքում է գերմանացիների կարգադրութիւնների դէմ։ Ամեն օր մահափորձեր են կատարվում գերմանացի օֆիցերների կեանքի դէմ։ Օֆիցերները խուսափում են երևալ Ղալաթիայում, որ քաղաքի դեմօկրատիկ մասն է։ Թիւրք ազգայնականութեան լայն խաւերի վերաբերմունքը դէպի երիտասարդ թիւրքերը թշնամական է։ Շատ թիւրքեր հիասթափվել են երիտասարդ թիւրքերի հայրենասիրութիւնից, անցնում են այն հոսանքի կողմը, որի նպատակն է երկրի քաղաքականութիւնը տանել այլ ուղղութեամբ։ Այդ հոսանքը օրէ-օր աճում է։ Լրտեսութեան սահմաններին չափ չը կայ։ Ամեն օր, երիտասարդ թիւրքերի յայտարարութիւնների համաձայն, կատարվում են ձերբակալութիւններ։ Ձերբակալվածները ենթարկվում են մահվան պատժի կամ ցմահ բանտարկութեան։

◆ Այս օրերս Գերմանիան վերջնագիր է ուղարկելու Ռումինիային, պահանջելով որոշել իր դիրքը վերջնականապէս։

◆ Բուլղարիայի և Թիւրքիայի միջև սև կատու է անցել։ Հաղորդում են, որ Թիւրքիայի և Գերմանիայի միջև գոյութիւն ունի մի պայմանագիր, որի համաձայն Բուլղարիային վերջերս արած զիջումները ժամանակաւոր բնոյթ ունեն։ Եթէ Բուլղարիան տիրէ Մակեդօնիային, այն դէպքում Եւրոպական Թիւրքիայի սահմանները անցնելու են բաւականին դէպի արևմուտք։

ԳԵՆԵՐԱԼ ԼԱԿՐՈՒԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄԻ ՄԱՍԻՆ

Հեղինակաւոր զինւորական գրող գեներալ Լակրուան գետեղել է «Temps»-ում մի յօդուած բալկանեան էկսպեդիցիայի մասին։ Լակրուան անհնար է գտնում, որպէսզի դաշնակից պետութիւնները ձեռք վերցնեն Սալօնիկից իբրև յենակէտից, որովհետև այդպիսի քայլի բարոյական և քաղաքական հետևանքները կը լինէին շատ ծանր դաշնակիցների համար և չէին արդարացնի այն զոհաբերութիւնները և ջանքերը, որ արել են դաշնակից պետութիւնները, որպէսզի Սալօնիկը դարձնեն յարձակողական յենակէտ, որտեղից հնարաւոր կը լինի խանգարել Գերմանիայի մշտական յարաբերութիւններ ունենալ Թիւրքիայի հետ։ Այդպիսի յարաբերութիւններ հաստատելու դէպքում՝ գերմանացիք մեծ օգուտ կարող են քաղել։

Գործերի այժմեան դրութեամբ դաշնակիցների առաջխաղացումը Բալկաններում դեռ ևս անհնարին է, բայց նրանց զինւորական ույժերը, որոնք մասնակցում են Վարդարի կռիւներում, կարող են յամենայն դէպս ետ պահել թշնամուն որոշ ժամանակ, մինչև որ իրանք կը կարողանան ուժեղացնել իրանց զօրքերի թիւը և աջողութիւն ունենալ։

Այժմ անհրաժեշտ է, Լակրուայի կարծիքով, Բալկանները բերել այն 100,000 անգլիական զօրքը, որոնք Գալիպօլի թերակղզում են գործում, որտեղ դրութիւնը այնպէս է, որ եթէ գերմանացիք կարողանան ամրապնդվել Գալիպօլի թերակղզու վրա, բերել այնտեղ իրանց ծանր արտիլէրիան և հիմնել խեղդիչ գազերի գործարան, 100 շանսից 99-ը ասում է, որ դաշնակիցների ույժերը երկու կամ երեք ամսվայ ընթացքում կը շպրտվեն դէպի ծովը։

Լակրուան այդ պատճառով խորհուրդ է տալիս լիկվիդացիայի ենթարկել գործողութիւնները Գալիպօլի թերակղզում։

Սալօնիկում այս բոպէիս կարելի է ամփոփել 150,000 դաշնակից զօրքեր, 50,000 իտալացիք և 200,000 սերբիական զինւորներ, որոնք վերոյիշեալ դաշնակիցների զօրքի թւի հետ կարող են ներկայացնել մի ահեղ ույժ։

Լակրուայի կարծիքով դաշնակից պետութիւնները պարտաւոր են ամեն ջանք գործ դնել, որպէսզի ազատեն դրութիւնը Մերձաւոր Արևելքում։

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՏԱՌԱՊԱՆՔԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԻ ԲՈՂՈՔԸ

Հոկտ. 25-ին Մանչեստրի Միլլընդ-Հօլ սրահին մէջ գումարուեցաւ հայանպաստ միթինգ մը, որուն գլխաւոր ատենախօսներն էին դեր-կոմս Բրայս և Ուէլըրն եպ.-ը։

Դեր-կոմս Բրայս ըսաւ. «Բելժիքայի, Ֆըրանսայի, Պօլոնիոյ, Սերբիոյ և մեր երկրին տառապանքները որչափ որ մեծ եղած ըլլան, անոնցմէ ոչ մէկը կրնայ իր մեծութեամբն ու ահաւորութեամբը բաղդատութեան դրուիլ այն տառապանքներուն հետ, որոնց մաս կազմեցին հայկական կոտորածներուն։ Հայերը օսմանեան հպատակներուն ամենէն օրինապահ տարրը կը կազմէին. անոնք մեզի չափ զարգացած և քաղաքակրթութեան կատարելութիւններուն ընտելացած էին։ Թիւրք կառավարութիւնը, պատերազմին սկիզբէն իսկ, միտքը դրած էր այս ամբողջ ժողովուրդը ոչնչացնել։ Այս գործին մէջ մոլեռանդութիւնը դեր չունեցաւ. իսլամ ժողովուրդին կողմէ ոևէ կրօնամոլ կիրքի բորբոքում տեղի չունեցաւ։ Ամբողջ գործը կառավարութենէն բղխեցաւ։ Այն կարծիքը թէ՛ հայերն իրենք տեղի տուին կոտորածներուն իրենց արարքներով՝ բացարձակապէս անհիմն է։ Ինչ որ պատահեցաւ՝ թիւրքական կայսրութեան իշխանութիւնը իրենց ձեռքն անցուցած անխիղճ չարագործներու խմբակին մէկ յարձակումն էր»։

Ուէլըրն եպ.-ը ըսաւ. «Միակ քրիստոնեայ պետութիւն մը կար, որ կրնար՝ եթէ ուզէր՝ վերջ մը տալ այս կոտորածներուն։ Այդ պետութիւնը Գերմանիան էր։

Այդ երկրին վրայ ծանրացող բազմաթիւ վատշուէր արարքներուն մէջէն, աստուածային դատաստանին աթոռին առջև ամենէն ահաւորը այն է, որ գերման կայսրութիւնը կը քաջալերէ ու կարող կը կացուցանէ թիւրք կառավարութիւնը քրիստոնեայ ժողովուրդ մը բնաջինջ ընելու։ Ահա այս է Գերմանիոյ դէմ իմ բերած ամբաստանութիւնս»։

—

Նիւ-Եօրքի «Ինդիպէնդէնթ» թերթը իր հոկտ. 18-ի թիւին մէջ հայկական կոտորածներուն վրայ կարճ, բայց ազդու յօդուած մը ունի, որ կը սկսի այսպէս.

«Կրօնական կոտորածներուն ամենէն մեծածաւալը և ամենէն վայրագը, զոր աշխարհ տեսած ըլլայ դարերէ ի վեր, այսօր գործադրուելու վրայ է Թիւրքիոյ մէջ»։

Կացութիւնը ամփոփ կերպով պարզելէ վերջ՝ խմբագիրը կը հարցնէ.

«Այս ահռելի պարագային մէջ ինչ կրնանք ընել մենք ամերիկացիներս, որ մեր այնքան դրամը և այնքան անձնուէր կեանքերը զոհած ենք Թիւրքիոյ վերածնութեան համար»։

Ահա իմ պատասխանը.

«Մեր բանակը կամ նաւատորմիղը չի կըրնար մինչև Թիւրքիա հասնիլ։ Մեզմէ աւելի զօրաւոր բանակներ այժմ զայն կը հարուածեն ու կը պաշտպանեն։ Ասկէ զատ Թիւրքիա այլևս ինքզինքին չի պատկանիր։ Կ. Պօլիսը պաշտպանող ռազմամթերքը կու գայ Գերմանիայէն։ Թիւրքական բանակը առաջնորդուած է գերման սպաներով։ Ե. Դրան մէջ Գերմանիոյ կամքն է, որ կը թագաւորէ։ Կրնանք ուրեմն ըսել թէ Գերմանիան պատասխանատու է այս կոտորածներուն համար։ Անշուշտ, անտարակոյս, թէև ոչ ուղղակի։ Գերմանիա կրնար փափագած չըլլալ զանոնք։ Բայց ինքը պատերազմով զբաղած էր, ու իր պատերազմական մինիստրութիւնը չմտածեց զանոնք արգիլել։

«Մենք կոչում կրնանք քրիստոնեայ Գերմանիային, որպէսզի արգիլէ Թիւրքիան՝ իր կայսրութեան մէջէն քրիստոնէութիւնը արմատապէս բնաջնջելէ։ Այս երկրին հանրային կարծիքի մէն մի օրգանին կոչ կընենք մեր այս դիմումին ձայնակցելու։ Աշխարհի հանրային խղճմտանքին ձայնը կըրնայ չլսուիլ Կ. Պօլսոյ մէջ, բայց պէտք է լսուի ան Բերլինի մէջ։

«Սակայն, Թիւրքիոյ վերջին դատաստանը մօտալուտ պէտք է համարել։ Աշխարհ մինչև վերջը հանդուրժեց անհանդուրժելի Թիւրքիոն։ Անոր եղեռնագործութիւնը պատուհասի համար երկինքին կաղաղակէ. «Ո՛վ Տէր, քու խողխողուած սուրբերուդ վրէժխնդիր եղիր»։ («Արշալոյս»)

ԳՈՐԾԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Թեհրանից գրում են «Тиф. Лис.» լրագրին հետևեալը.

Նոյեմբերի 25-ին պարսկական կաբինէտի պետ Մուստաֆի-ուլ-Մէմալիքը գումարեց մինիստրների խորհրդի գաղտնի և արտակարգ նիստը, ուր յայտնեց իր որոշումը ընդհատել բանակցութիւնները անգլօ-ռուսական դիպլօմատիայի հետ՝ Անգլիայի և Ռուսաստանի հետ դաշնակցութիւն կնքելու մասին։ Իր որոշումը մինիստր-նախագահը պատճառաբանում է նրանով, որ մայրաքաղաքի հասարակական կարծիքը, Պարսկաստանի քաղաքական շրջանները, մէջ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵԾ ԻՆՔՆԱԶՈՀՈՒԹԻՒՆ

(Ի. Ն. Պոտապենկոյի)

III

Գիշերվայ ժամը 3-ին մի բան զարթեցրեց կապիտան Շահրենևին։ Նրան թւաց, թէ իբր որոտաց մի անելի ուժեղ հարուած, հէնց իր ականջի տակ։ Նա ցնցվեց և բացեց աչքերը։

Պատուհանի փեղկի փոքրիկ ապակուց ներս էր թափանցել հազիւ նկատվող լոյսը։ Լուռ էր ամեն ինչ։ Շները նոյն իսկ չէին հաչում։ Ի դէպ է ասել, որ նա մի գիւղում գեղջկական խրճիթում էր քնել։

Նա ըմբռնեց, որ ոչ մի հարուած չէր եղել, այլ պարզապէս իրան զարթեցնողը եղել է այն միտքը, որը գուցէ վաղուց հովանաւում էր իր գիտակցութիւնը, սակայն խորը քունն արգելք էր եղել։

Վեր ցատկեց նա անկողնուց։ Տանջող մտահոգութիւն։ Սարսափելի կորստի անտանելի զգայութիւն։ Բայց ինչ, ինչ ախր... Նա ափով բռնեց գլուխը. ձեռքով պինդ խփեց գլխին, և յանկարծ իրան թւաց, որ դադարեց սրտի բաբախումը։

Նա յիշեց... Երեկվայ դէպքը պարզ ու ցայտուն կերպով կրկնվում էր իր առաջ։ Միշան սպանված... Միշան այլ ևս չը կայ աշխարհիս երեսին... Երեկ առաւօտը ինչպէս կրակոտ վառվում էին նրա աչքերը. ինչ մանկական ուրախութեամբ ծիծաղում էր նա ինչ-որ բանի վրա, իսկ այժմ, այժմ նրա համար ամեն ինչ վերջացել է։ Աչքերը մարեցին, և նա այլ ևս չէ ծիծաղելու։

Ա՜խ, աստուած... Ինչու նա իր մօտ եկաւ հէնց այն ժամանակ, երբ յարձակում էր նշանակված։ Ինչու մի օրով կամ մի քանի ժամով ուշ չեկաւ։ Ինչու չը սխալեց, որ գոնէ ուրիշ զօրամասում նշանակվէր, և այդպիսով գուցէ այլ կերպ դասաւորվէին իրերը։ Ո՞ւր է հիմա նա... Ա՛խ, այժմ այդ ուշ է...

Մտաբերեց թէ ինչպէս երեկ նրան թաղեցին այնտեղ, գիւղի գերեզմանատանը, առանձին գերեզմանում. նա կարող է գտնել նրան. յուշարձան կանգնեցնել, վրան նշանակել, որ սա հէնց նա է՝ Միխայիլ Շահրենևը։ Ինչպիսի խղճուկ, անարժէք առաւելութիւն նրա համար։

Բայց, ինչ որ է, նա շուտով հաշտվեց եղբօր կորստի իրողութեան հետ. բայց ոչ թէ մի մխիթարական կողմ գտնելով, կամ նրան քիչ սիրելով։ Ո՛չ, սիրում էր այնքան, որից աւելին անհնար էր. սիրում էր այնպիսի քնքշութեամբ, որպիսին մատչելի է մարդու սրտին։ Նա հանգստութեամբ ընտելացաւ եղբօր մահվան. այդպիսի մահեր նա շա՜տ էր տեսել։

Տեսել էր առողջ, զուարթ, կենսուրախ կեանքեր, որոնք քիչ առաջ իրար հետ մի դատարկ բանի վրա ծիծաղում, հրճվում էին, բայց ահա ընկած անկենդան, իրանից երկու քայլ հեռու։

Ինքն էլ, որ պատրաստ էր մեռնելու, շատ անտարբեր էր դէպի մահը։

Զգում էր, որ իր աչքի առաջ անշնչացողները նոյնպէս որևէ մէկի եղբայր, որդի, կամ ամուսին էին շատ թանկ նրանց համար։ Բայց բաղդը հաշւի չի առնում այդ։ Նա անտես է անում մեր մանր աշխարհիկ կապերը։

Եղբօրը՝ Միշայի համար նա աւելի կըսկծաց, քան կարելի էր։ Իսկ այժմ բթացաւ այդ կսկծի զգայութիւնը։

Ափսոս՝ շա՜տ ափսոս. որովհետև եղբայրը շատ էր ջանել, նա կարող էր ապրել, բաղդաւոր և երջանիկ. նա այդ բոլորի համար յարմարութիւններ շա՜տ ունէր։

Բայց չը նայած վերոյիշեալ փիլիսոփայութեան, որը միշտ էր հասնում օգնութեան, նա չէր կարողանում դեռ հանգստանալ։ Սպանված Միշայի ողբալի տեսքը յանկարծ յայտնվում էր աղջամուղջային մշուշի մէջ, անշարժ, կշտամբանքով լի աչքերով...

— Մայրի՛կ, իմ խեղճ մայրիկ...,—շշնջաց նա այնպէս պարզ, որ ինքը լսեց։—Ի՞նչ կը պատասխանի արդեօք քեզ։ Ես քեզ ի՞նչ պիտի յայտնեմ այդ մասին։

Եւ ահա նա այժմ խորք մտածում էր մօր մասին. իր սովորական փիլիսոփայութիւնը այդ առիթով՝ կորցրեց իր ույժը։ Այն չէր հանգստացնում իրան. այն անյարմար մըտածելակերպ էր այս դէպքում։

Անգութ մահ, որ ոչ մի ժամանակ նկատի չի առնում թէ ով, մի որևէ տեղ, հեռու այդ մահից տանջվում ու լալիս է դառն արցունքներով։ Եւ մահվան այդ անհոգ անտարբերութիւնը նա առաջին անգամ զգաց յանձին իր մօր։

Մօր՝ ժամանակից առաջ ծերացած, մաշված դէմքը... խոնարհ, հեզ... Աչքերի մէջ դեռ պահած քնքոյշ սիրոյ զգացումները դէպի որդիները, առանձնապէս դէպի Միշան... Վշտերը, որ շատ էր ունեցել իր կեանքում, թափանցում էին աւելի խորը և առաջնութիւն տալիս միայն որդիական սիրոյ զգացումներին։

Միշայի վրա նա հիացմամբ էր նայում։ Եւ յիրաւի՝ նրանով էր պարծենում մայրը։ Գեղեցիկ, առողջակազմ, օժտված գերազանց ընդունակութիւններով։ Գիմնազիայում լաւագոյն աշակերտներից թւում էր։ Նրա հեզ, ազնիւ բնաւորութիւնը բազմաթիւ մտերիմ ընկերներ էր վաստակել։ Բոլորը նրան սիրում էին. և մայրական սիրտը հրճուանքով ցնծվում էր՝ այդ ամենը տեսնելիս։

Եւ որքան կապիտանը աւելի էր վերլուծում Միշայի կեանքի փայլուն գծերը և նրա վերաբերմունքը դէպի մայրը, այնքան դժնդակ էր դառնում իր դրութիւնը։

Նա զգում է, որ Միշայի հետ պատահած դժբաղդութեան ամեն մի մասնիկի փոխարէն պատասխանատու էր մօր առաջ։

Այո, պատասխանատու, պատասխանատու էր Միշայի համար. նա այդ զգում էր։ Նա քիչ էր լինում տանը և ի հարկէ անմիջական ազդեցութիւն ունենալ եղբօր վրա չէր կարող։ Բայց պէտք էր արդեօք վերջին տեսակցութեան ժամանակ այդպէս անզգոյշ կերպով զարթեցնել Միշայի մէջ այն գաղտնի ձգտումը։ Եթէ ասած չը լինէր այն խօսքերը, գուցէ Միշան երբէք չը մտածէր էլ պատերազմ գնալ։

Սերմն ընկել էր պարարտ հողի մէջ։ Եւ մինթէ մայրը կարող էր այն մոռանալ։ Ո՛չ, չէր կարող, կը յիշէր անշուշտ։

Նրան անհնարին էր թւում հաղորդել մօրը այդ սոսկալի լուրը։ Ինչպէ՞ս հաղորդել. չէ՞ որ դա պարզապէս կը նշանակէր սպանել նրան։ Նա չը պիտի կարողանար տանել։ Դա կը խորտակէր նրա առանց այն էլ փլրուն սիրտը։

Երեկվայ նրա խիզախ ձեռնարկութիւնն ունեցաւ անսպասելի հետևանքներ։ Իր լարած ույժերով, անգիտակցաբար, իր ջոկատի հետ նա պատճառ եղաւ այն հսկայական աջողութեան, որ ունեցաւ կռւող գունդը, և փրկել նրան վտանգից։

Իր ջոկատին հանգիստ էր տրված. զինւորներից շատերը պարգևներ ստացան, իսկ իրան հարկ է ներկայանալ զօրքի գլխաւոր, կարևոր անձնաւորութեան։

Այս մասին նա պաշտօնապէս աւելի ուշ իմացաւ, բայց արդէն նոյն օրը, առաւօտեան վաղ, իր ջոկատում գտնվող իր մտերիմ պօրուչիկ Սվիրիլինը հաղորդել էր իրան։

Նրանք դեռ դպրոցում մտերիմներ էին։ Բայց Սվիրիլինը զինւ. ծառայութեան մէջ աջողներիցը չէր, մի քիչ ետ էր մնացել։ Նա մի մռայլ տիպը, վախկոտ մարդ էր։ Իր գործը կատարում էր կանոնաւոր, բայց սարսափելի վախենում էր մեծաւորից և նրա ներկայութեամբ կորցնում էր իրան։

Կռւում նա լաւ էր զգում իրան։ Շահրենևը իբրև ջոկատի հրամանատար՝ չէր կարող գովասանել նրան։ Նա պարտաճանաչ էր, ճշգապահ, մանրակրկիտ, միշտ իր գործի գլուխ, հրաշալի կերպով ազդում էր զինւորների վրա և գիտէր խոհեմ հարթել նրանց միջի ամեն տեսակ մանր թիւրիմացութիւնները. բացի դրանից, նա ունէր իսկական զինւորական ոգի։ Նա կարող էր առաջ նետել, երբ անհրաժեշտ լինէր, և ոգևորել իր օրինակով։

Բայց խաղաղ ժամանակ նրան տանջում էին զօրախաղերը և զօրատեսները։ Հակառակի պէս՝ ստիպված է ծառայել մի մեծ զինւորական կենտրոնում, ուր կային շատ գեներալներ, գալիս էին ամեն տեսակ բարձր անձնաւորութիւններ և պէտք էր ձևականօրէն միշտ ներկայ լինել։

Ահա նման դէպքերում նրան շատ էր վհատում մեծաւորի ներկայութեանը զգացած երկիւղը։ Նա կորցնում էր իրան, շփոթվում և երբեմն պատճառ դառնում մեծ անախորժութիւնների։

Այդ հանգամանքն էր ահա, որ ետ էր թողել նրան զինւորական ծառայութեան աստիճաններից։

Կապիտան Շահրենևը այդ ցերեկ, յոգնած իրան տանջող մտահոգութիւններից, հէնց որ տեսաւ նրան, իսկոյն կարիք զգաց պատմել իր ցաւերը բարեկամին։ Սվիրիլինը ծանօթ էր նրա ընտանեկան պայմաններին, ծանօթ է մօր հետ և դեռ երէկ էր իմացել Միշայի մահը։ Ինքը շատ էր մտահոգ այդ մասին։ Նա չէր սպասում, որ այդ դէպքը կապիտանին այդպիսի խորը կսկիծ պատճառէ։

— Լսի՛ր դու, Սվիրիլին,—ասաց նրան կապիտանը (նրանք աշակերտական նստարանից սկսած «դու»-ով էին խօսում),—ճի՞շդ է, որ կարելի՛ է տանել ամեն մի կորուստ։ Մենք զինւորականներս պատրաստ պիտի լինենք ամեն բանի։ Բայց ես ինչպէս ասեմ մօրս ի՞նչ խօսքերով։

— Յարմար խօսք չը կայ,—ասաց Սվիրիլինը.—ի՞նչ բառերով էլ լինի ասված, դա Աննա Միխայլօվնայի համար շատ խիստ կը լինի։

— Բայց չասել ես պատրաստ եմ... եթէ նա իմանայ լրագիրներից, այդ աւելի զարհուրելի կը լինի։ Ո՛չ, ես չեմ կարող դանդ ւիք և ամբողջ ազգաբնակութիւնը սաստիկ յուզված են, մանաւանդ պարսկական հարաւը, որ պատերազմ է մղում արդէն Անգլիայի հետ Պարսից ծոցի ափին, և յուզված են դաշնակցութեան դէմ այն պետութիւնների հետ, որոնց պարսիկ ժողովուրդը համարում է իսլամի թշնամիներ, մի դաշնակցութիւն, որ ուղղված է դաւանակից Թիւրքիայի և նրա դաշնակից ու բոլոր մուսուլման պետութիւնների հովանաւոր Գերմանիայի դէմ։ Միւս կողմից նա, իբրև պետ կառավարութեան, կատարելապէս գիտակցում է, որ Պարսկաստանը չէ կարող մնալ այլ ևս չէզոքութեան անորոշ դրութեան մէջ, որից դուրս գալ պահանջում է ամբողջ պարսիկ ժողովուրդը։ Սակայն նա իր սրտագին ցանկութիւնը չարտայայտեց, թէ հարկաւոր է դաշնակցութիւն կնքել Թիւրքիայի և Գերմանիայի հետ, իբրև տրամաբանական անխուսափելի հետևանքներ նրա խօսքերի՝ չէզոքութեան և Անգլիայի ու Ռուսաստանի հետ դաշնակցական յարաբերութիւններ պահպանելու անհնարինութեան մասին։ Բայց այդ «լռութիւնը», պարզ է, աւելի արտայայտիչ և պերճախօս էր ամեն տեսակ խօսքից։ Երեք մինիստր—զինւորական՝ Սիփէհդարը, ներքին գործերինը՝ պրինց Ֆարման-Ֆարման և ֆինանսներինը՝ Վուսուգ-ուդ-Դովլէն —մտնելով կաբինէտի մէջ՝ ռուսաց և անգլիական միսիաների պահանջով, բողոք յայտնեցին կաբինէտի գլխաւորի ընդունած վճռի դէմ, բայց մինիստրների մեծամասնութիւնը արտայայտվեց նրա կողմը, և նրա վճիռը յաղթանակեց։

Պարսկաստանի հետ դաշնակցելու գաղափարը ծագել է Պետրօգրադում և Լոնդոնում արդէն վաղուց, գերմանական աշնանային անաջողութիւնից յետոյ, որ ունեցաւ մեր ռազմաբեմում, և Դարդանէլի գործողութեանց ընդհատումով, որ թիւրք-գերմանական դիւանագիտութիւնը սկսեց պարզաբանել և բացատրել Պարսկաստանում, որ կենտրոնական պետութիւնների յաղթութեան սկիզբն է, և սկսեցին նոր բարդութիւններ յարուցանել մի ուրիշ մուսուլման պետութեան մէջ։ Սակայն այդ գաղափարի իրականացմանը դիմեցին միայն մօտ ժամանակներս, նոյեմբերի սկզբին, Թեհրանի նշանաւոր անցքերից յետոյ, որի ժամանակ Թեհրանից հեռացան Թիւրքաց և աւստրո-ունգարական դեսպանները։ Բանակցութիւնն այդ դաշնակցութեան մասին տարվում էր ամենաշտապ եղանակով և գրեթէ բացառապէս մեր միսիայի ձեռքով, որից, յամենայն դէպս, եթէ չէր էլ կարելի սպասել որևէ դրական հետևանք, չէր էլ կարող որևէ վնաս լինել ոչ մեզ համար, ոչ էլ մեր ապագայ պրօբլեմատիկ դաշնակիցների համար։ Մեր զօրախումբը Ղազվինում դեռ չէր հասցված այնչափ ույժերի, որոնք թոյլ տային մեզ ձեռնարկելու պատժիչ արշաւանք Համադանում, մնալով նոյնպէս ահեղ ույժ Թեհրանի և բոլոր մեզ թշնամի տարրերի համար. միւս կողմից շահի երկերեսանի և կեղծաւոր կառավարութիւնը՝ նոյնպէս ժամանակ շահեց իր ույժերը հաւաքելու և ետ մղելու Ղազվինից դէպի իրան և Համադանի կողմը շարժվող վտանգը։

Դաշնակցութեան և նրա պայմանների մասին լուրերը, պարզ է, չէին կարող գաղտնի մնալ, և, նոյեմբերի 22-ին, Թեհրանի մի քանի տասնեակ անուանի վաճառականներ մտան պարսկական արքունի դուռը և ուզեցին տեսակցել առաջին մինիստրի հետ։ Պատգամաւորութեան տրամադրութիւնը, որ ստացել էր Թիւրքաց և աւստրո-ունգարական դեսպանների հրահանգները, անհաշտ ռազմական էր։ Պատգամաւորութիւնը յայտնեց Մուստաֆի-ուլ-Մէմալիքին, որ պարսկական ողջ ժողովուրդը կանգնած է հաւատակից Թիւրքիայի և նրա դաշնակից Գերմանիայի կողմը և պահանջում է անմիջական պատերազմ յայտարարել Ռուսաստանին և Անգլիային։ Ի դէպ ասած, վաճառականական պատգամաւորութեան ռազմական զգացումը միանգամայն անկեղծ էր և նրանում չը կար ոչինչ արհեստական և պատուիրված։ Այդ պատգամաւորութեան անդամներից շատերը անվճար պարտքեր ունեն տալիք ռուսաց զեղչատու-խնայողական բանկին, որը մի քանի անգամ յիշեցրել է նրանց այդ մասին, և հիմա այդ պոլիտիկանների աչքում պատերազմը Ռուսաստանի հետ հանդիսանում է ամենաարագ, վճռական և ձեռնտու միջոցը, որ իրանց անվճար պարտքերը ռուսական բանկին միանգամից փակեն, և այս հաւատը և իրանց առջև բացվող ծիածանագոյն հեռանկարները անսպասելի եկամուտների Թեհրանի բազարի այդ խաղաղ բնիկներին տրամադրել էր ռազմականօրէն։

Մուստաֆի-ուլ-Մէմալիքը, որ նոյեմ. 25-ին մինիստրների խորհրդում պարսիկ ժողովրդի անունից խօսեց ընդդէմ Ռուսաստանին և Անգլիային դաշնակցելու և որը ցանկանում է միայն մի բան, որ իրան չը կողոպտեն և չը վիրաւորեն «սահմանադրական» կառավարութեան լիբերալ նահանգապետներն ու շվէդական ժանդարմէրիան, և որպէսզի իրան, վերջապէս, թողնեն հանգիստ, չաւերեն, չը սպանեն և զոռով իրանց հրոսակախմբերի մէջ չը մտցնեն մարդկանց «հաւատակից» Թիւրքերը, գերմանական գործակալները, այդ Մուստաֆի-ուլ-Մէմալիքը, պարզվեց սակայն որ, ըստ ամենայնի վատ և անհեռատես պետական գործիչ է և միջակ դիպլոմատ, անընդունակ իմանալու և նախատեսելու անցքերը և վաղօրօք, առանց որևէ հարկի, իր թղթերն է փռում հակառակորդի առջև, որը իր ձեռքին ունի առաւել ուժեղ խաղ։

Նոյեմբերի 25-ին պարսից կառավարութեան գլուխը իրան կողմնակից յայտարարեց Գերմանիայի և Թիւրքիայի, իսկ հետևեալ օրը, երեկոյեան, Թեհրանում տեղեկութիւն ստացվեց, որ 500 ժանդարմ և 1200 մուջահիդներ, դուրս գալով Համադանից և դրա նախօրեակին նեղվելով Ղազվինի մեր առաջապահներից և ետ շըպրտվելով Աւկից դէպի Սուլթան-Բուլաղի լեռնանցքը, մաքրեցին վերջինս նոր ճակատամարտից յետոյ և անկարգ փախան դէպի Համադան։ Ղազվինից հաղորդվեց նոյնպէս, որ ժանդարմների և գերմանական վարձկանների հրամանատարը Համադանում, շըվէդական մայոր Դեմարքէն, շտապով հրացան և պատրոններ է բարձում ձիերի և ուրիշ անասունների և պատրաստվում է հեռանալ Համադանից, վերցնելով 160,000 թուման, գրաւած լինելով այդ՝ Պարսկաստանի անգլիական շահն-շահի բանկի Համադանի բաժանմունքից, և որ Համադանի ամբողջ զօրականութիւնը, 6000 մարդուց աւելի, փախել է Համադանից Մէյլար ու Բուրուջիր այն բանից յետոյ, որ ռուսաց առաջապահ մասերը շարժվել են Սուլթան-Բուլաղից Ռեզան, որ 85 վերստի վրա է Համադանից։

Ի դէպ ասած՝ գերմանական դեսպան պրինց Ռէյսը, որը գնալով Քիրմանշահ՝ այցելեց Կում և Սուլթանաբադ՝ գերմանական ագիտացիայի այդ կենտրոնները, ուր նրան ողջունում էին իբրև մուսուլմանների միսիայի, այժմս գտնվում է Մելայերում և բոլոր ժամանակ գաղտնի հեռագիրներով փոխանակվում է պարսկական ժանդարմէրիայի պետ՝ գնդապետ Էդվալի հետ, որը իր հերթին նոյնպէս հեռագիրներ է ուղարկում Դէմարքէի մայր Ջելառբէմին և Սենեհին, որոնք անցել են գերմանացիների և Թիւրքերի կողմը իրանց մարդկանցով և նոր խմբեր են կազմում Քիրմանշահում, Քիւրդիստանում և Զենջանում, համաձայն Թեհրանից առած կարգադրութեան։

Ռուսաց զօրքի առաջխաղացումը դէպի Համադան, որը դատարկվեց Դէմարքէի խմբերից, սարսափելի տպաւորութիւն թողեց Թեհրանում. մեր թշնամիները շփոթված են երևում և սպասում են իրանց համար ամեն դժբաղդութիւն Թեհրանում, որտեղից հեռացել են Կում և Սուլթանաբադ՝ բոլոր ժանդարմները և պարսիկ մուջէհիդները՝ նրանց պաշտպանները։ Գերմանական, աւստրիական և թիւրքական դեսպանները նորից կապկպում են իրանց իրեղէնները, շտապելով հեռանալ Թեհրանից դէպի Քիրմանշահ՝ պրինց Ռէյսի ետևից։

Այժմ մեր դիպլոմատիան կարող է խօսել աւելի կտրուկ տօնով և փոխանակ տարուբերվելու հրամայել իր ցանկութիւնները անբարեխիղճ և կեղծաւոր պարսիկ կառավարութեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Մենք յայտնեցինք, որ Ամերիկայից եկել են երկու ամերիկացի միսիօնարներ միստր Վիլսօն և միստր Հիլլ, որոնք ուղարկված են Միացեալ Նահանգներում կազմված մի մեծ կոմիտէի կողմից, որին մասնակցում են շատ պառլամենտական, հասարակական և քաղաքական գործիչներ։ Յարգելի պատգամաւորները եկել են ուսումնասիրելու մեր երկրում պատսպարված թիւրքահայ փախստականների վիճակը և ապա ըստ այնմ գործելու։ Այժմ կարող ենք հաղորդել, որ յիշեալ պատգամաւորները, տեսակցելով փախստականների գործի գլխաւոր լիազոր գեներալ Թամամշեանի հետ, ստացել են նրանից առաջարկ՝ իրանց վրա վերցնել փախստականներին տաք հագուստեղէն և վերմակ հայթայթելու գործը և, ընդունելով այդ առաջարկը, երէկ երեկոյեան մեկնեցին Երևանի նահանգը՝ անձամբ ծանօթանալու փախստականների վիճակի հետ։

—

Յօգուտ հայ փախստականների Լոնդոնից Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը վերջերս ստացել է 160 հազար րուբլի, որ ուղարկել է Էջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

—

Ամսիս 8-ին Թիֆլիս հասաւ Արխանգելի և Պետրօգրադի վրայով Ամերիկայից հայ կամաւորական-սանիտարական-բժշկական այն խումբը, որի մասին հաղորդեցինք անցեալ անգամ։ Խումբը բաղկացած է դոկտոր Նետօն-խան Ազգապետեանից իր կնոջ հետ, որ ամերիկուհի է, դոկտ. Յովսէփեանից, դոկտ. Ալթունեանից իր կնոջ հետ, որ ամերիկուհի է, տիկին Պալեանից (գթութեան քոյր) և մի ֆելդշէրից։ Խումբը իր հետ բերել է բազում դեղօրայք և վիրաբուժական գործիքներ. Ռուսական Կարմիր Խաչը ընդունել է այդ խումբը իր ծառայութեան մէջ։ Խումբը ամսիս 9-ի երեկոյեան ներկայ եղաւ «Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի» նիստին և խորհրդակցեց։ Երէկ, դեկտ. 10-ին, խումբը «Մշակի» խմբագիր Հ. Առաքելեանի հետ այցելեց Թիֆլիսի քաղաքագլուխ և Քաղաքների Միութեան գլխաւոր լիազոր Ալ. Խատիսեանին և ապա ռուսական Կարմիր Խաչի գլխաւոր լիազորի պաշտօնակատար Մ. Դոմէրշչիկին։ Որոշվել է, որ խումբը գնայ և գործէ Վանի շրջանում։ Խումբը մտադիր է ճանապարհին այցելել Վեհ. Կաթողիկոսին և խնդրել «Եղբ. Օգնութեան» աջակցութիւնը Վանում և շրջականերում սննդական կայաններ, ճաշարաններ հիմնելու համար։ Այսօր ամերիկահայ այդ խումբը հիւր է լինելու Տ. Նազարբեկի Գրական-Գեղագիտական Սալոնի հերթական երեկոյթին։

—

(Հեռագիր)

Մոսկվա, 9 դեկտեմբերի

Լրագիրներում եղած նկատողութեան առիթով, խնդրում ենք տպել. «Բժիշկ Աթաբէկեանը հեռագրում է Արծափից, որ նոյեմբերի ընթացքում փախստականներին բաժանված է տաք կերակուր 27,000 բաժին, թէյ 78,000, կաթ հիւանդ երեխաներին 2500 բաժակ. բժշկական օգնութիւն է ցոյց տրված 2600 անգամ. հիւանդանոցում եղել են 27 հիւանդներ, սանիտարական դրութիւնը բաւարար է. համաճարակ չը կայ. ճարակող մալարիայի դէմ կռիւ է մղվել խինինի լայն չափով գործածումով, որը ուղարկել է կոմիտէտը։ Կիսամուշտակները բաժանում ենք. գնել եմ երեխաների շորեր, տոնաման, փափախ և բումազէյ կտոր՝ բաժանելու համար։ Սննդական կայանների փոխարէն անհրաժեշտ են պարենաւորման պահեստներ. շրջանային կոմիտէտը աւանսներ դեռ չէ տուել. մթերքները բաց ենք թողնում առքի գնով»։

Մոսկվայի Հայկ. Կոմիտէի Նախագահ՝
Մամիկոնեան

—

Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը Լօնդօնից ստացաւ 46,050 ր. հայ փախստականների կարիքների համար։

—

Տիկ. Վօլսկայան Ռոստովից ստացել է 400 պուդ տաք շորեր, որը յանձնել է Քաղ. Միութեանը՝ փախստականներին բաժանելու։

—

Թիֆլիսի անգլիական հիւպատոսի միջոցով քաղաքագլուխ Ալ. Խատիսեան ստացել է մի նամակ, որով յայտնվում է, որ Լօնդօնում կազմվել է մի կոմիտէտ, որի մէջ մտնում են Կենտերբերեան Թեմի եպիսկոպոսը, ռուսաց դեսպան Բենկենդօրֆը, լորդ Կրօմէրը և շատ ուրիշ պատուաւոր անձինք։ Կոմիտէտի նպատակն է օգնութիւն հասցնել հայ փախստականներին։ Այս նամակի հետ միասին անգլիական տեղական հիւպատոսը յայտնել է, որ Լօնդօնում հաւաքված իրերը և դրամներն արդէն ուղարկվել են Արխանգելսկ և մօտ օրերս կը ստացվեն։

—

Դեկտեմբերի 9-ին Մեծ Իշխան Փոխարքային ներկայացան ամերիկական միսիօնարներ Վիլսօն և Հիլլ, որոնք, ինչպէս յայտնի է, Կովկաս են եկել հայ փախստականների գործերով։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Յաւալի երեւոյթ

Նոր-Բայազէտ, 1 դեկտեմբերի

Մի քանի տարի առաջ տեղիս քաղ. ուսումնարանում սովորում էին մօտ 20 հոգի Թուրք աշակերտներ, որոնք գալիս էին սովորելու մեզ հարևան Թուրք գիւղերից։ Մենք շատ ուրախ էինք, որ մեր հարևանների մէջ ևս առաջ է եկել կրթութեան պահանջը, հետևապէս ամենքին հաճելի էր, որ Թուրք գիւղական ռամիկ ամբոխը ևս օրինակ վերցնելով հայերից՝ ընթանում է առաջադիմութեան ուղիով։ Դրանից զատ՝ մօտակայ Աղվերիր Թուրք գիւղում, որ կենտրոն է 7—8 Թուրք գիւղախմբի, բացված էր տարրական դպրոց, ուր ուսանում էին 50-60-ի չափ Թուրք աշակերտներ։ Սակայն այժմ, 2—3 տարի անցնելուց յետոյ, թէ Աղվերիրի ուսումնարանն է փակվել և աշակերտները ցրվել և թէ մեր դըպրոցում սովորողները դուրս գնացել։ Այժմ ցաւօք սրտի պէտք է ասել, որ մեզանում սովորում են միմիայն 2 հոգի Թուրք աշակերտներ։ Գ. Սիմոնեան

—

Այլ է քարոզվում եւ այլ կատարվում

Ախալցխա, 29 նոյեմբերի

Ամսիս 29-ին նշանակված էր տեղիս քաղ. ինքնավարութեան դահլիճում «Ախալցխայի կօօպերատիվ» ընկերութեան առաջին ընդհ. ժողովը, որոշելու համար մի կարգ կարևոր հարցեր և ընտրելու ինչպէս վարչութեան, այնպէս և վերստուգիչ մասնաժողովի անդամներ իրանց թեկնածուներով։

Այդ օրը բոլոր հերթական հարցերը քննութեան առնվեցին, իսկ ընտրութիւնները ժողովականների մեծամասնութեան որոշման համաձայն յետաձգվեցին ամսիս 25-ին։

Յիշեալ օրը հաւաքված էին մօտ 70 փայատէրեր։ Ժողովը վճռեց ընտրելու 9 հոգի վարչութեան անդամներ և նոյնչափ թեկնածուներ և 3 հոգի էլ վերստուգիչ մասնաժողովի անդամներ։

Դասախօսող ուսուցիչները բոլոր ժամանակ զգուշացնում էին ժողովականներին, որ պէտք է վարչութեան անդամներ ընտրել ոչ թէ վաճառականներից, այլ վաճառականութիւնից հասկացող գործունեայ մարդկանցից, որոնք ինչ-ինչ պատճառներով ներկայիս չեն պարապում վաճառականութեամբ, որովհետև մեր սկսած գործի շահերն այդ են պահանջում. երբ վաճառականներից ընտրվեն, մեր սկսած գործը իր նպատակին չի ծառայի և մօտիկ ապագայում վնասված կը տեսնենք, և այլն և այլն։

Չը նայած այդ տեսակ յորդորներին՝ այնուամենայնիւ ընտրվեցին վարչութեան անդամներ 5 ուսուցիչներ և 4 վաճառականներ՝ նախօրօք պատրաստված ծրագրով։

Ախալցխացի

անել այդ պարտաւորութիւնը։ Այդպէս չէ՞ մի՞թէ։

Սվիրիդինի գլխում կազմվեց մի ծրագիր, բայց շատ երերուն և այնպիսի ձևի, որ բարեկամին չը կարողացաւ պատմել և լռեց։

Բայց նա սրտանց ուզում էր թեթևացնել կապիտանի դրութիւնը։ Նա այդ րոպէից սկսեց միջոցներ փնտռել այդ ուղղութեամբ։

IV

Երբ կապիտան Շահրեննիվը հրաման ստացաւ ներկայանալ մեծաւորին իր ջոկատի մի օֆիցերի և մի քանի զինւորների ուղեկցութեամբ, Սվիրիդինը յախուռն ցանկութիւն յայտնեց գնալ նրա հետ։ Նրան յայտնի էր, որ կապիտանը պիտի խնդրէր կարճատև արձակուրդ, որ գնայ յայտնէ մօրը՝ կրտսեր եղբօր մահվան մասին, և համոզված էր, որ իրան չեն մերժի։ Նրա մտքումն էլ ծագեց արձակուրդ խնդրելու միտքը, որ ուղեկցի կապիտանին։ Հանգամանքները նպաստաւոր էին։

Հետևեալ առաւօտը նրանք երկուսով գնացին զինւորական գերեզմանատունը և լուռ կանգնեցին Միշայի թարմ գերեզմանի մօտ... Ապա ջոկատից ընտրված զինւորի հետ ձիով ուղևորվեցին 15 վերստի վրա գտնվող մեծաւորի մօտ։

Այնտեղ սպասածից աւելի աջող գնաց ամեն բան՝ թէ կապիտանի և թէ Սվիրիդինի համար։ Երկուսն էլ 5 օրով արձակուրդ ստացան, որը լիովին բաւական էր։

— Իսկ ես չը գիտէի, որ դու էլ ես ուզում գալ,—զարմանքով հարցրեց ընկերոջը Շահրեննիվը։

— Ես մի քանի գործեր ունեմ,—անհաստատ պատասխանեց նա.—հէնց պարզապէս մի պատ շունչ քաշելու համար և... գոնէ բաղնիք գնալ ապա ինչ... նաև տեսակցել...,—աւելացրեց նա ցածր տոնով։

Շահրեննիվը հասկացաւ, բայց չը խօսեց։ Բանը նրանումն էր, որ այն քաղաքում, ուր իրանք մնում էին առաջ և ուր Միշայի՝ սըրանից մեկնելուց յետոյ բնակվելու էր եկել մայրը, այդտեղ Սվիրիդինը գաղտնի սիրային կապեր ունէր, որը, չը գիտես ինչու, միշտ թագցնում էր ամենքից, նաև իրանից։ Ըստ երևոյթին՝ դա մի կին կամ աղջիկ էր, ոչ այն շրջանից, որին իրանք էին պատկանում. գուցէ մի որևէ նորաձևուհի կամ վաճառուհի էր, և Սվիրիդինը ամաչում էր ծանօթացնել շրջանակին։

Ոչ ոքի հետ նրա մասին չէր խօսում, բայց բոլորը այդ գիտէին և ձևացնում էին, թէ չը գիտեն։ Պարզ էր, որ նրան էր վերաբերում այդ «տեսակցութիւն» խօսքը։ Այդպէս հասկացաւ Շահրեննիվը և իրաւունք չը համարեց հարց ու փորձ անել։

Ուղեկցող զինւորը ետ դարձաւ ջոկատը, իսկ իրանք այդտեղից ուղղակի դիմեցին դէպի կայարան, նստեցին վագոնը և գնացին արձակուրդի։ Ճանապարհի համար պիտի կորցնէին ընդամենը մի գիշեր։ Առաւօտեան ժամը 8-ին գնացքը պիտի ժամանէր այդ քաղաքը։

Գիշերը շատ երկար թւաց։ Կապիտանն իրիկվանից աշխատեց քնել և լաւ քնել. բայց հէնց որ պառկում էր, իսկոյն համոզվում էր, որ քուն չէր կարող ունենալ։

Ժամ առ ժամ, աւելի ու աւելի տիրում էր նրան տանջալից յուզում։ Քաղաքին հետզհետէ մօտենալու միտքը, ուր ապրում էր այժմ իր մայրը, պատկերացնում էր իրան մի ինչ-որ անկարելիութիւն, զգում էր երկիւղ, որ մօրը հանդիպելիս չը պիտի կարողանայ ոչինչ ասել։ Բառերը պիտի մեռնեն իր շրթունքների վրա։

Ի՞նչպէս գնալ և ասել մէկին, «քո կեանքում ամենաթանգագինը կորաւ ընդմիշտ»։

Դա թշնամուն էլ դժուար էր ասել. բայց նա պիտի ասէր մի մօրը, աշխարհիս երեսին մնացող իր ամենաթանգագին մօրը։

Սվիրիդինը նոյնպէս տեսնում էր նրա տանջանքը և այդ պատճառով նա էլ չը կարողացաւ քնել։ Աշխատում էր մխիթարել ընկերոջը՝ պատմելով զանազան բաներ, փորձեց նոյնիսկ անեկդոտներով ծիծաղեցնել, բայց ինքն ամաչեց իր արածից։

— Է՜հ, Անդրէյ Եգօրիչ,—ասում էր նա.— ի հարկէ ես հասկանում եմ... Մայրը... բայց միթէ միայն Աննա Միխայլօվնան ունի այդպիսի կորուստ։ Այդպիսի անբաղդ մայրերի թիւը շա՜տ է. նոյնիսկ այնպիսիները կան, որոնց մի հատիկն է սպանված։ Իսկ դու, յամենայն դէպս, կաս նրա համար։ Գիտես ինչ, հոգիս, լսիր ինձ... Դու այժմ յուզված ես չափազանց և չես կարող լուրջ դատել։ Ես հանգիստ եմ։ Ահաւասիկ առաւօտեան ժամը 8-ին քաղաք ենք հասնում։ Այդ բաւականին վաղ է, այնպէս չէ՞. Աննա Միխայլօվնան դեռ անկողնում կը լինի։ Քո անակնկալ գալուստն արդէն մահվան երկիւղ կը ներշնչէ նրան. հը՞, ինչ ես կարծում։

— Կարող է պատահել,—դժկամակութեամբ պատասխանեց կապիտանը։

— Եւ ահա մենք այսպէս կանենք։ Ես կիջնեմ հիւրանոց, մի համար կը վարձեմ. չէ՞ որ ես ազգականներ չունեմ քաղաքում։ Դու էլ ինձ մօտ կիջնես։ Ժամը 9-ի մօտերը ես մենակ կը գնամ Աննա Միխայլօվնայի մօտ. մենա՞կ, հասկանում ես։

— Այդ անկարելի է,—բացագանչեց կապիտանը։—Դու ես ուզում հաղորդել նրան։ Բայց նա իրաւունք ունի ինձանից իմանալ այդ։

— Ո՛չ, ո՛չ, ինչ ես ասում։ Ես կը պապանձվեմ. ես միայն կը զգուշացնեմ նրան քո գալուստը, հասկանում ես։ Մի րոպէով կանգնեմ, իբր չափազանց կարևոր գործի պատրուակով, և միայն կը հաղորդեմ ուղղակի, որ դու այստեղ ես, իբր թէ գնացքից անմիջապէս դիմել ես մեծաւորին և շուտով իր մօտ կը լինես։

— Բայց նա անպատճառ Միշայի մասին կը հարցնի քեզ։

— Ի հարկէ. առաջին իսկ հարցին, բայց ես կասեմ, որ չեմ տեսել. իսկ թէ յանձնարարութեամբ ուղարկված է ուրիշ զօրամաս, ահա բոլորը։ Ես այսպէս եմ մտածում, որ նա կը մտածի քո գալու և առանց Միշայի գալու մասին. հասկանում ես. հազար ու մի մտածելակերպ կունենայ, տարբեր ենթադրութիւններ, բացի ամենասոսկալին. և նա ինքն իրան աննկատ կերպով կը նախապատրաստէ ամեն մի անակնկալի։

— Կարող է պատահել. դու ճիշդ ես խօսում, կարող է պատահել... դէ, ուրեմն այդպէս անենք։

Սվիրիդինը հազիւ զսպեց գոհունակութեան ժպիտը. նա չէր սպասում, որ այդպէս հեշտ կաջողվէր. նա կարծում էր, որ կապիտանը պիտի յամառէր։ Չէ՞ որ նա, իսկապէս, հէնց այդ բանի համար էր ուղեկցում կապիտանին։

Քաղաքում ոչ մի ծանօթ չունէր տեսնվելու։ Այն գաղտնի կապերը, որ նա թագցնում էր, էլ գոյութիւն չունէին։ Մինչև պատերազմը ամեն ինչ վերջացրել էր։

Նա նկատել էր, թէ ինչ սարսափելի էր թւում կապիտանին՝ մօր հետ ունենալիք տեսակցութիւնը, որին, անխուսափելիօրէն, հարկադրված էր յայտնել եղբօր մահվան մասին, և որ այդ սարսափը կարող էր մեծանալ և... Աստուած գիտէր թէ ինչ աղէտների հասնէր. ուստի վճռել էր ուղեկցել նրան. բացի այդ՝ գլխումը ծնունդ էր առել մի այլ ծրագիր, աւելի լայն քան այն, ինչ որ պատմեց կապիտանին։

Նրանք այդպէս էլ չը քնեցին այդ գիշերը։ Ժամը 8-ի մօտերը գնացքը մօտեցաւ մեծ քաղաքի կայարանին։ Իրեր չունէին, բացի ձեռքի փոքրիկ պայուսակները, և գրեթէ ամենից առաջ կայարանից քաղաք անցան։

Առաջին տպաւորութիւնը ապշեցուցիչ էր. ամենուրեք բուրում էր մարդկային կենսուրախութիւն, այն յիմար, սովորական ունայնութիւնը, առօրեայ մանրութիւնները, որոնք իսկապէս կազմում են կեանքի գլխաւոր իմաստը և գրաւում մարդկանց դէպի ինքը։

Մեծ իրարանցում էր կայարանի շուրջը։ Բեռնակիրներ, կառապաններ, էլեկտրաքարշեր, գործով շտապող անցորդներ, կանացի հաճելի դէմքեր, այդ բոլորը, բոլորը յիշեցնում էին սովորական խաղաղ կեանքը և այնպիսի դառն հակադրութիւն էր այդ եռամեայ պատերազմական կենցաղին, որը ամբողջովին կարծես խստութիւններից և զրկանքներից լինէր կերտված։

Կապիտանն էլ մի րոպէ մոռացաւ այն անտանելի մտահոգութիւնը, որը ամբողջ գիշերը տանջել էր իրան։

Ծանօթ հիւրանոցում, ուր իրանք շատ անգամ էին գիշերել, վարձեցին մի համար։ Սվիրիդին իսկոյն պատրաստել տուեց ինքնաեռը, ճարեց կաթ, սեր, խոզապուխտ, խաշած սառ հաւ, ամեն ինչ, ինչ որ չէր կարելի ձեռք բերել այնտեղ ռազմաճակատում, և ստիպում էր նրան ուտել այդ բոլորը։

— Ույժ է հարկաւոր, հոգիս, հոգու արիութիւնը անհրաժեշտ է։ Դու առանց այն էլ ուժասպառ ես, ահա թէ ինչու գիշերը չէիր կարողանում քնել։ Ամրապնդվիր, եթէ ոչ քեզ համար՝ գէթ ի սէր գործի։ Պախարակելի է, երբ դու առաջինը կը խորտակես քո կեանքը։

Եւ կապիտանը ենթարկվեց նրան երեխայի նման և կատարում էր այն, ինչ որ պահանջում էր Սվիրիդինը, որը շուտ-շուտ ժամացոյցին էր նայում։ Երբ 9-ից քառորդ էր պակաս, սկսեց հագնվել։

— Դու, Անդրէյ, հանգիստ նստիր, մինչև ես վերադառնամ. հասկանում ես. Աննա Միխայլօվնային միջոց պէտք է տալ, որ նա նախապատրաստել կարողանայ իրան։

Եւ նա դուրս եկաւ, ուղևորվեց Աննա Միխայլօվնայի մօտ։

Թարգմ. Ռ. Իսկանդէրեան

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏՆԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԵՊ.-Ի ՅԻՇԱՏԱԿԻՆ

I

Հին-Նախիջևան, 6 դեկտ.

Այսօր, Կայսերական մաղթանքից յետոյ, վիճակիս փոխանորդը տեղական քահանաների հետ հոգեհանգիստ կատարեց հանգուցեալ Կարապետ եպ.-ի համար։ Սիօն վ.-ը հոգեհանգստեան պատշաճ դամբանական-քարոզ խօսեց հանգուցեալ Կարապետ սրբազանի համար, դրուատելով նրան իբրև ճեմարանի նախկին յաւագոյն սան, իր ուխտին և կոչմանը մինչև վերջ հաւատարիմ եկեղեցական, իբրև ճեմարանի ուսուցիչ և տեսուչ, առաջնորդ և գրող ու գործիչ։ Եկեղեցում բաւական հասարակութիւն կար։

Իգրեկ

II

Զաքաթալա, 6 դեկտեմբերի

Այսօր տեղիս հայոց ս. Գէորգ եկեղեցում, պատարագից յետոյ, հոգեհանգիստ կատարվեց նորոգ հանգուցեալ Կարապետ եպ.-ի յիշատակին։ Հոգեհանգստին ներկայ էր երկսեռ բազմութիւն. կային նաև օտարազգիներ։ Դրուատվեցին սրբազանի բարեմասնութիւնները, կատարած ազգօգուտ մեծ գործունէութիւնը։

Սօյզադէ

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՊԵՏՔԵՐԸ ՀՈԳԱՑՈՂ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Դիլիջան, 4 դեկտ.

Այստեղ կայ մօտաւորապէս 3000 հոգուց բաղկացած մի գաղթականութիւն, որ տեղաւորված է մասնաւոր բնակարաններում և զինւորական զօրանոցներում։ Թէ ինչ են ներկայացնում. . ապրող գաղթականներն իրանց ապրելակերպով, դա կը տեսնենք յետագայում։

Այսքան գաղթականութեան համար գոյութիւն ունի երեք հիւանդանոց, որոնք էլ չեն կարող բաւարարել հիւանդներին։ Հիւանդանոցները բաժանված են երեք կարգի. 1) մեծ հիւանդանոց, որ ունի 110 մահճակալ, 2) վարակիչ հիւանդութեանց բաժանմունք՝ մօտ 35 մահճակալով և 3) մօտ 40 մահճակալ էլ ունի երեխաների հիւանդանոցը։

Մարդ երբ մտածում է, որ այսքան գաղթականների համար յատկացված է 3 հիւանդանոց 185 մահճակալով, ակամայից մտածում է, թէ ինչ է պատճառը, որ հիւանդութիւնները դրանց միջից ոչ թէ վերանում են, այլ ընդհակառակն, միշտ էլ աճում են և հիւանդ գաղթականներով լցնում հիւանդանոցները (ըստ ցուցակագրութեան)։

Որպէս զի պարզ լինի այս հարցի պատասխանը, հարկ է մտնել գաղթականների ներքին կեանքի մէջ և տեսնել, թէ ինչպէս են ապրում և, որ ամենագլխաւորն է, ինչպէս են խնամվում։ Մտէք նրանց բնակատեղին, տեսէք նրանց տեղաշորերը — այն էլ եթէ ունեն — որոնք բաղկացած են մի մի կտոր շալերից, որ բերել են իրանց հետ, և Կ. Հ. Բ. Ընկ. տուած՝ երկու հոգուն մի ադեալից։

Այս դեռ անկողինը։ Ապա հագուստը, ապա ուտելիքը, ապա բնակարանի ցրտութիւնը, որին ոչ մի կենդանի արարած չէ կարող դիմանալ։

Սրանք հանդիպողին ցոյց են տալիս իրանց ստացածները որպէս պարծանք և անվերջ օրհնանքներով փառաբանում հայ ազգին և Կ. Հ. Բ. Ընկ. հիմնադրից սկսած մինչև վերջին ծառան. այնպէս որ՝ տեսնողի վրա մի ուրիշ տպաւորութիւն է թողնում, թէ սրանց գոհունակութեանց և օրհնանքներին վերջ չը կայ։ Այո, նրանց օրհնանքներին վերջ չը կայ, երբ տեսնում են, թէ կայ մէկը, որ հետաքրքրվում է իրանցով և որոշ չափով հոգում է իրանց պէտքերը, ու չէ թողնում բոլորովին անմխիթար։ Թէկուզ այդ մէկը օգնէ նրանց նիւթապէս կամ չը խնայէ իր ջանքերը օգնելու բարոյապէս, ինչպէս են այստեղ բժ. Կարապետ Եազմաճեանը (Թիւրքահայ բժիշկ, բժիշկ Թիւրքական զօրքի, որ պատերազմի ժամանակ կամովին անցել է ռուսաց կողմը) և ուսանող Ասատ Բալանթարեանը (ըստ գաղթականների տուած տեղեկութիւնների), որոնք իսկապէս աշխատում են ոչ միայն ձևականօրէն պաշտօնակատարի դերում, այլ և ամբողջ ժամանակ մխիթարում են նրանց և անձնուիրութեամբ նրանց բոլոր պահանջներին գոհացում տալիս, ի հարկէ որքան նրանց արտօնված է և կարող են։ Մի խօսքով՝ ըստ իրանց աշխատութեան՝ միակ անձնուէրութիւններն են, որոնք նուիրված են իրանց գործին . . . .

Այստեղ նոյնպիսի անձնուիրաց վերաբերմունք և եռանդուն աշխատանք է ցոյց տալիս Ասատ Բալանթարեանը։ Սա միանգամայն մոռանալով իր անձնական և ընտանեկան գործերը՝ ամբողջովին նուիրվել է գաղթականական գործին՝ ծառայելով բոլորովին ձրի։ Եւ ծառայել ինչպէ՜ս։ Գաղթականներն ուղղակի նրա անունով են երդվում։

. . . .

Սլաք

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

Փախստականներին Թիֆլիսում նպաստող հայկական կազմակերպութիւնները հրաւիրվում են ուղարկել մեր ապաստարանը մինչև 80 հոգի կին և երեխայ՝ բացի սնունդից ստանալու և ննջարան, այն պայմանով որ նրանք ունենան իրանց համար տաք հագուստ ու անկողին։ Սնունդ՝ առաւօտեան նախաճաշ (թէյ հացով), կէսօրին ճաշ (ամեն օր մսեղէն) անխտիր բոլոր փախստականներին, քաղաքի որ մասից էլ լինեն, շարունակ տրվում է։ Իսկ երեկոները ընթրիք (թէյ հացով) տրվում է այժմս բացառապէս ապաստարանում գիշերօթիկ թէ կանանց, երեխաներին և թէ տղամարդկանց։ Վերջիններիս համար յատկացված է երեք սենեակ, որոնցից երկուսում ցերեկները «Վասպուրական» մեր դպրոցի դասարաններն են։

Ստացված են նուէրներ.

Դրամով՝

Սեդրակ Մանդինեանի գագաղին պսակի փոխարէն՝ Թուլթայխից՝ հանգուցեալ մանկավարժի քրոջ-որդի տէր-Յուսիկ ք. Ապրիլեանից 5 ր., Գադիեվկայից՝ Գալուստ Ս. Գէորգեանից և Յովհաննէս Ոէհանեանից 320 ր., հանգանակած իրանց շրջաններում, Գադիեվկայում՝ Յովհաննէս Ոէհանեանից 15 ր., Յակոբ Զաւուշեանից 25 ր., Մարիամ Ադամեանից 15 ր., Յակոբ Թօփչեանից 10 ր., Յակոբ Գէորգեանից 10 ր., Մկրտիչ Ադամեանից 3 ր., Յակոբ Համբինեանից 3 ր., Համբարձում Թօփչեանից 3 ր., Պետրոս Քրիստապոլեանից 3 ր., Սարգիս Միկիչեանից 3 ր., Յարութիւն Պօղոսեանից 1 ր., Սամսոն Մուրադեանից 2 ր., եղբ. Խուստավերդեաններից 5 ր. (98 ր.)։ Կամենսւատից՝ Գրիգոր Զախալեանից 10 ր., Յովակիմ Տուէյմազեանից 5 ր., Գրիգոր Զոլախեանից 3 ր. (18 ր.)։ Մաքսիմօվկայից՝ Դալուստ Գէորգեանից 10 ր., Վերգինէ, Սերովբէ, Արտաշէս Գէորգեաններից 3-ական ր., Պետրոս Յունանեանից 5 ր., Ոմից 3 ր. (27 ր.)։ Վարվառօպօլից՝ Քերովբէ Մոլխանից 15 ր., եղբ. Արշակ և Քերովբէ Դարբինեաններից 10 ր., Վահան Պալասանեանից 3 ր., Սենեքերիմ Յունանեանից 2 ր., Ստեփան Ոսկանեանից 3 ր. (33 ր.)։ Ալմազնայից՝ Միքայէլ և Աննա Մուրադեաններից 25 ր., Գաբրիէլ Մնացականեանից 2 ր., Նշան Կարապետեանից 5 ր., Սեդրակ Ռաֆայէլեանից 5 ր., Աղապիոս Զաքարեանից 15 ր., եղբ. Յակոբ և Բագրատիօն Թումանեաններից 5 ր. (57 ր.)։ Պաւլօվկայից՝ Զաքար Մէնէմէշեանից 25 ր., Կարապետ Մաշուրեանից 15 ր., Կարապետ Փիրազեանից 10 ր., Պետրոս Հաջեանից 5 ր., Գրիգոր Ապիրեանից 5 ր., Միքայէլ Դիլանեանից 3 ր., Բաղդասար Եսայեանից 2 ր., Խորէն Թորոյեանից 1 ր., Դերենիկ Թորոյեանից 3 ր., Աւետիս Սաչամեանից 3 ր. (72 ր.)։ Մկրտիչ Պապաջանեանից 15 ր. (ընդամեն 320 ր.)։ Տէր-Սահակ ք. Սահակեանից (ամսական) 3 ր.։

Իրերով՝

Եղբ. Բասենցեաններից 1 պուդ սապոն, իշխանուհի Մարիամ Թումանեանից 2 բլիզ, 10 դերիա, ճերմակեղէն 5 կտոր, 1 զոյգ գուլպայ։

«Մշակի» միջոցաւ՝
«Մշակ» № 272 — 27 ր.։

Տ. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Այսօր Գրական-Գեղագիտական Սալօնի հերթական նիստը նուիրված կը լինի զրոյցի Ամերիկայի հայութեան շուրջը, ամերիկահայ սանիտարական-բժշկական խմբի գալստեան առիթով։ Խումբը հրաւիրված է երեկոյթին։

◆ Հայոց Գիւղատնտեսական Ընկ. շարունակում է համախօսականներ ստանալ հայ գիւղերի համայնքներից, որոնցով վերջինները խնդրում են Ընկ. էժան գնով ալիւր և ցորեն հայթայթել իրանց։ Ընկ.-ը, առ այժմ հանդիպելով խոչընդոտների, անկարող է իսկոյն բաւարարել գիւղացիների խնդիրքը, միայն խոստանում է, որ երեք շաբաթից յետոյ կարող կը լինի բաւարարել նրանց, երբ «Նարեադներ» ստանալով՝ ալիւրը և ցորենը կը տեղափոխվի Հիւսիսային Կովկասից մեր երկիրը։

◆ Բագւում կազմված հայ ուսանողների ընկ.-ը, որի նպատակն է կենսական մթերքների հայթայթումով օգնել հայ գիւղացիութեանը, յայտնում է Հայ Գիւղատնտեսական Ընկ.-եան, որ ինքը պատրաստ է իր վրա վերցնել Գանձակի և Բագուի նահանգների հայ գիւղացիութեան կարիքների հոգացողութիւնը։ Գիւղատնտեսական Ընկ., ուրախութեամբ ընդառաջ գնալով այս առաջարկին, Բագուի ընկ.-անն է ուղարկել Բագուի և Գանձակի կարիքաւոր գիւղացիութեան ցուցակը, նրանց համախօսականների հետ միասին, որ իր ժամանակին ստացել է ինքը։

◆ Բարձրագոյնս հաստատված են՝ կոմերսայի խորհրդական Թաղիանոսեանը՝ Բագուի առևտրական դպրոցի հոգաբարձութեան խորհրդի նախագահ, Դաւիթ-խան Աւան-իւզբաշեանը և վաճառական Շուստօվը՝ պատուաւոր հոգաբարձուներ, առաջինը Թիֆլիսի՝ Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի անուան ռէալական դպրոցի, երկրորդը՝ Երևանի տղայոց գիմնազիայի։

◆ Երկրագործութեան մինիստրի Կովկասի լիազօր և Կովկասի պարենաւորման առանձին խորհրդակցութեան նախագահի լիազօր Կ. Ի. Շաշկովսկին վերադարձաւ Ռոստովից (Դ./վ.), ուր նա գնացել էր այնտեղ եղած ալիւրի պաշարը և գները իմանալու և գնացքների երթևեկութեան կանոնաւորութիւնը ստուգելու։

◆ Քաղ. Միութեան տեղական ճիւղը այս օրերս կովկասեան ռազմաբեմի զանազան մասերը կուղարկի ծննդեան ընծաներ զինւորների համար, որպիսի ընծաները տանելու են Միութեան անդամները։ Պարսկական զօրախմբի համար ծննդեան ընծաներ ուղարկվելու է Բագու—Էնզելիի վրայով։ Այդ պատճառով Միութեան տեղական լիազօրը դիմել է Բագուի քաղաքագլխին, խնդրելով որ իր հաւաքած 5000 ռուբլիով ընծաներ գնի և պատրաստի Բագւում և, առանց Թիֆլիս ուղարկելու, Էնզէլիի վրայով ճանապարհի Պարսկաստան, իսկ Թիֆլիսի կոմիտէտն իր ընծաները Թիֆլիսից ուղարկելու է Ճորոխի, Օլթիի, Սարըղամըշի, Վանի, Ջուլֆայի ուղղութիւններով։

◆ Թիֆլիսի քաղաքային ծառայողները իրանց հաշւով ծննդեան ընծաներ են գնել և պատրաստել զինւորներին ուղարկելու։ Այդ ընծաները դրված են փոքրիկ տոպրակների մէջ, որոնց ամեն մէկում կայ 1 թաշկինակ, պօստային 5 թուղթ ու 5 ծրար, 25 կտոր շաքար, $^1/_8$ ֆունտ թէյ, $^1/_8$ ֆ. ծխախոտ, 1 տուփ լուցկի, 1 կոճ թել, 1 ասեղ, 1 կտոր սապոն, 20 կօնֆետ և 2 բաժակ արևածաղկի սերմ։

◆ Թիֆլիսի բոլոր վարսավիրների այսօրվայ եկամուտի ամբողջ կէսը յատկացվելու է զինւորների համար ընծաներ գնելու գործին։

◆ Դեռ շատ առաջ կովկասեան գլխաւոր կօմիտէտը 40000 ր. էր յատկացրել սպառողական խանութներ բանալու Կովկասի քաղաքներում։ Այժմ մտադրութիւն կայ այդ խանութներից բանալ Գանձակի և Երևանի նահանգներում։

◆ Դեկտեմբերի 9-ին Թիֆլիսում ստացվեցին հետևեալ մթերքները. ալիւր 44 վագոն, ցորեն 5 վ., եգիպտացորեն 1 վ., ձու 270 պուդ, միրգ 255 պուդ, վառելափայտ 18 վ., գարի 1 վ., նաւթ 8 վ. մազութ 7 վագոն։

◆ Ի նկատի ունենալով, որ քաղ. դումայի ներկայ կազմի իրաւասութեան ժամանակը լրանում է մօտ օրերս, այդ պատճառով քաղաքագլուխը կարգադրել է, որ քաղ. վարչութեան բոլոր բաժանմունքներում տեղեկութիւններ հաւաքվին, թէ ինչ է արել դուման անցած քառամեակում մինչև պատերազմը և պատերազմի օրով։ Այդ նիւթերը պէտք է զեկուցվին դումայի նոր կազմին։

◆ Այսօր կը կայանայ քաղ. բիւջէտային-ֆինանսական և վերստուգող յանձնաժողովի միացեալ նիստը քաղաքի 1916 թւի նախահաշիւը քննելու։

◆ Տղայոց 2-րդ գիմնազիայի վերաշինութեան համար ժող. լուս. մինիստրութիւնը բաց է թողնում 15,000 ռուբլի։

◆ Ստացանք Թիֆլիսի Բեթղեհէմ ս. Աստուածածին եկեղեցու և երեցփոխի 10-ամեայ գործունէութեան տեղեկագիրը և հաշիւը։ Այդ տեղեկագիրը և հաշիւը ցոյց են տալիս, որ երեցփոխ Բ. Աւանեանի դէմ յարուցված ինտրիգները ոչ մի հող և հիմք չեն ունեցել, այլ, ընդհակառակը, նրա գործունէութիւնը եղել է արդիւնաւէտ՝ եկեղեցու համար, յաւելմամբ եկամուտների և կալուածների։

◆ Ստացանք «Պատմական քաղուածքների» պրակ 9-րդը էջ 1370—1520, կազմեց Եղիշէ ա. ք. Գեղամեան, գինն է 50 կոպէկ։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ Բրէշկօվսկայային թոյլատրված է մնալ Իրկուտսկում բժշկվելու համար։

◆ Մոսկվայի դուման որոշել է միջնորդել, որպէսզի պետական գանձարանը հատուցանէ մայիսեան անկարգութիւնների ժամանակ տուժած անձերի և հաստատութիւնների վնասները։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը կարգադրել է՝ անմիջապէս պատրաստել 1897 թւին ծնվածների ցուցակները և ներկայացնել մինչև դեկտ. 15-ը։

◆ Օբէր-պրօկուրօրի պաշտօնում Զաւինչկօվսկիին նշանակելը մեծ տպաւորութիւն է գործել բիւրօկրատիական շրջաններում։ Նրա քննութիւնների շնորհիւ պաշտօնանկ եղան մի քանի նահանգապետներ և այլ անձինք։ Ըստ երևոյթին Զաւինչկօվսկիին նշանակելով այդ պաշտօնում, ցանկութիւն է եղել մաքրել «Արցիբաշեվեան» տարրերին։

◆ Երկրագործութեան մինիստրութիւնը վճռել է բանալ բարձրագոյն գիւղատնտեսական ինստիտուտ Հիւսիսային Կովկասում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական թատրոն

Ռուսաց Երաժշտական Ընկերութեան առաջին սիմֆօնիական երեկոյթը, որ կայացաւ դեկտ. 7-ին, անցաւ մեծ աջողութեամբ։

Երեկոյթի ծրագրի մէջ դրված էր Գլազունովի 5-րդ սիմֆօնիան, Չայկովսկիի ջութակային համերգը, Նիկոլայեվի պօէմա-ֆանտազիան (առաջին անգամ) Լիստի «Dies irae» պարա փրազան և Րիմսկի-Կորսակովի յայտնի «Երեք հրաշքը»։ Այդ երեկոյ իբրև սօլիստ հանդէս եկած Ֆիշբերգը ունի փոքր, բայց գեղեցիկ տոն և ընտիր տեխնիքական յատկութիւններ. կատարողի համար կարելի էր իբրև թերութիւն համարել ինտօնացիայի ոչ բաւականաչափ մաքրութիւնը։ Չայկովսկիի կօնցերտի նրա կատարումը մեզ չը գոհացրեց. այդ կօնցերտը պահանջում է անսովոր հզօրութիւն և լայն թռիչք և, անտարակոյս չէ համապատասխանում Ֆիշբերգի զուտ անհատական յատկութիւններին։ Այդ կողմից աւելի լաւ տպաւորութիւն է թողնում երեկոյթի մի ուրիշ սօլիստը՝ Մ. Վինօգրադով — գերազանց տեխնիքական և երաժշտական առաւելներով օժտված մի արտիստ։

Վինօգրադովի խաղը աչքի է ընկնում արտակարգ մաքրութեամբ. արտիստը կատարելապէս տիրում է կատարման բոլոր նիւանսներին և ակամայ գրաւում է ունկնդրին խաղի որոշականութեամբ և աւարտականութեամբ։

Ծրագրի ամենահետաքրքրական կտորը Նիկոլայեվի պօէմա-ֆանտազիան էր. այդ պօէման օրիգինալ և շատ շահեկան մի երկ է, որ զմայլօրէն և վառ կերպով շարադրված է։

Երաժշտական Ընկ. Թիֆլիսի ճիւղը կարող է անպայման հպարտանալ, ունենալով իր դասատուների թւում այնպիսի երաժշտական մեծութիւն, որպիսին հանդիսանում է Նիկոլայեվը, որին հասարակութիւնը վարձատրեց բուռն ծափահարութիւններով և որին մատուցվեցին բազում ծաղկեփնջեր։

Ս. Առաք.

ՄԱՄՈՒԼ

«Վան-Տոսպ» շաբաթաթերթը իր 2-դ համարում, խօսելով «Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի» և նրա ծագման մասին, հետևեալն է գրում.

Վասպուրականի յուսաբեկ նահանջի ծնունդն է այս մարմինը, յուլիսեան արնաշաղախ գաղթահոսանքով կովկասահայութեան կենտրոնը հասած վասպուրականցի մի խումբ մտաւորականների թախանձագին դռնաբախումների արդիւնք։ Ամբողջ մէկ տարի հայութեան սիրտը՝ Վանը անիրաւեկ էր այստեղ, կովկասահայութեան մէջ՝ յանուն Թիւրքահայ դատի անցած դարձածներին... ինչպէս նաև կովկասահայերն էլ բուն երկրում կատարվող անցքերին։ Ընդհանուր Վասպուրականի յուլիսեան նահանջին յաջորդող Վանի անմիջական վերագրաւումը հարկադրում էր բուն երկրացիներին իրական միջոցներ խորհել՝ վերադարձող ժողովրդին կարելիութիւններ տալու և Վանն ընդհանուր ու վերջնական աւերումից ազատելու համար։ Շատ դիմումներ եղան, շատ դռներ ծեծվեցին, բայց ի զուր... Ազգային Բիւրօ, հայկական շատ և ուրիշ մեծ անուն կրող շատ դռները փակվեցին նրանց առաջ, արհամարհանք, վիրաւորանք և մերժումն եղաւ պատասխանը իրանց բոլոր դիմումներին։

Ահա ճիշդ այս ժամանակն էր, որ պէտք տեսնվեց մի նոր մարմնի կազմակերպութեան, ուր և մշակվեց «Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի» գործունէութեան նախագիծը։ Իրանց հասարակական դիրքով վստահելի, հանրածանօթ և հեռատես մի քանի անձեր յանձն առան ընդառաջ երթալ բուն երկրի ցաւից խօսող, նրա իրական պահանջներից բղխող ցանկութիւններին։

Ի՞նչ է նպատակը նորակազմ «Հայաստանի Վերաշինութեան Յանձնաժողովի»։ Այն շրջաբերականը, որ նա հրատարակ հանեց, որոշ կերպով բացատրում է գործի նպատակը՝ «աջակցել վասպուրականցի և Թիւրքահայ մտաւորականներին՝ հայրենիքի վերաշինութեան սուրբ գործի մէջ»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿՈՉ

Թիֆլիս, 9 նոյեմ.

Թիֆլիսի քաղաքի մերձակայ գիւղերում՝ Խաչի-Թէլէթում, Շուլտիլիսում, Միրզօյի-Թէլէթում, Կումիսում, Մուխաթում և Վաշլեվանում, ուր ապրում է բազմաթիւ հայ ժողովուրդ, բացվեցին վերջին տարիներում հայ ծխական դպրոցներ։ Տգիտութեան մէջ խարխափող և մայրենի լեզուն մոռացած հայ ժողովրդի համար դրանք մի-մի լուսատու ջահեր են, ուսման և գիտութեան պտղաբեր սերմ սերմանող։ Այդ դպրոցներին իր միջոցների համեմատ օգնում է Կ. Հայոց Բարեգործ. Ընկ.-ը, բայց շատ պակասութիւններ են զգում յիշեալ դպրոցները և նրանց աշակերտութիւնը դասական պիտոյքների և դպրոցական պարագաների՝ դասագրքերի, քարտէզների, պատկերների, ընթերցանութեան գրքերի և այլ պարագաների մէջ։ Ուստի սրանով դիմելով հայ հեղինակներին, դպրոցական հաստատութիւններին, աւագ ուսուցիչներին, նաև ժողովրդեան կրթութիւնն իրանց սրտին մօտ ընդունող անձանց, խնդրում եմ օգնութեան հասնել յիշեալ նորաբաց չքաւոր դպրոցներին ինչով կարող է. նոյնպէս դիմում եմ դպրոցական հոգաբարձութիւններին խնդրել եթէ իրանց դպրոցում հին կամ աւել ուսումնական պիտոյք գտնվի՝ ուղարկ այդ դպրոցներին. ամեն մի նուէր կընդունվի խորին շնորհակալութեամբ։ Նուէներն ուղարկել Սարգիս աւ. ք. Շիօյեան Թիֆլիսի Նորաշէնի դպրոցը։

Վերոյիշեալ դպրոցների հոգաբարձութեան անդամ՝ Սարգիս աւ. ք. Շիօյեան

Խմբագիր-հրատարակիչ՝ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№			
№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Ջուլֆա	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Բորժոմ	3 ժ. 20 ր.	ցերեկ

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№			
№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 11 ր.	առաւ.
	Բորժոմից —	7 ժ. 35 ր.	առաւ.

ԱՒԱԳՈՅՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեա
Հիմնված 1880 թ.
([illegible], Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12
ԲԺԻՇԿՆԵՐԸ
Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12½ ժ. վիրաբուժութեան [illegible] վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ՕՂԱՍՈՐԵԱՆ—2½—4 ժ. Ներքին, ջղային և [illegible] հիւանդութ. և ծննդկան.
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի [illegible] հիւանդութ.
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ., հիւանդ. [illegible] երեխայոց ներքին և հիւ. և ծննդկան.
ԲԺԻՇԿՈՒՀԻՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի [illegible] և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—216

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРОЙ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.
ВЕРХНІЙ ЭТАЖЪ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ՄԵԿ. ՉՄՇԿԵԱՆԻ
1916 Թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Չը նայելով ամեն բանի թանգութեան գները չեն աւելացված։
«Ծոցինը» 20 կ., «Սեղանինը» 30 կ.
Պատուէրները առանց կանխավճարի չեն ընդունվում, և որպէս զի ժամանակին ստանան, պէտք է շտապեն վաղօրօք յայտնել
Հասցէն՝ Թիֆլիս, ՄԱԿԱՐ ՉՄՇԿԵԱՆ
(Ե. Կ.) 883. 10—4

ՀԱՐԿԱՒՈՐ Է
Երևանում գտնվող մի կօնդիտերեան խանութի համար
ԳՈՐԾԱԿԱՏԱՐՈՒՀԻ
Դիմել՝ Թիֆլիս, Միխայլօվսկի պր. № 1, «Արմէնիա» հիւրանոց, Հայրապետեանցին
ցեր. ժամը 1—2-ը։
907. 2—2

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում լրագիրներ և ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցետոմսեր և այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և ... լատինականների բարբառ...
Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրիտ և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կարել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնպէս յանձնել։
ԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՉԱՆԱՉԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԻ ՊՐԷՍ-ԿՈՒՐԱՆՏ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆոն № 67.

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.